Յաջիե Զնդին՝ անվանի գիտնականը, գրողը և բանահավաքը, թանկ աճում է քուլոյ ժողովորի մշակույթի պատմության մեջ: Նրան վիճակվել է գրական-գիտական գործի մեջ ամենադժվարն ու պատվավորը, իր ժողովորի մշակույթի, մասնավորապես գրականության և բանասիրության հիմնադիրներից մեկը լինելու բախտը: Յետևաբար, նա հանդես է գալիս և սկզբնավորողի, և նորագույն սերունդների ուսուցչի արժանավոր դերում: Թուրքական յարադանից մազապուրօ, հայ բախտակից որբերի հետ միասին, Կարսի նահանգի երեխան ունեցել է ծանր մանկություն: Խաչակել է որբանոցի դառն ու դժվար հացը, և նա նոր կյանքի արշալույսին բռնել է մի ազնիվ ճանապարհ, ձգտելով դեպի գիտությունն ու գիտելիքների բարձրունքները: Նրա հայացքների ծևավորմանը մեծապես նպաստել են հայ նշանավոր գիտնականները, գրողներն ու բանասերները: Ժամանակի ընթացքում Յաջիե Զնդին կատարել է մեծ աշխատանք, անմիջականորեն, հայ ընկերների աջակցությամբ մասնակցել է քրդական դասագրքերի ու ընթերցարանների ստեղծմանը, սկսել է հավաքել քրդական ժողովրդական բանահյուսության հարստությունը, վիպերգերը, հեքիաթները, բանահյուսություններն ու առածները, գրել է բազմաթիվ ուսումնասիրություններ՝ քրդական բանահյուսության գանձերի մասին, այստեղ էլ դնելով գիտական մեծ գործի սկիզբ:

Այս նորագույն շրջանի քրդագետները չեն կարող շրջանցել այս մեծ աշխատանքը և հարգանքով չիիշել Յաջիե Զնդիի վաստակը: Բայց այս բոլորի հետ միասին, ես չեմ կարող հատուկ ջերմությամբ չխոսել նշանավոր գիտնականի և մանկավարժի բարոյական բարձր նկարագրի մասին: Յաջիե Զնդին ամենուր, գրական և գիտական աշխատանքի մեջ եղել է ազնիվ, համեստ և տքնածան մշակ, սիրել է ընկերներին, մարդկանց և երեխաներին: Ուշադիր է եղել գիտական և գրական երիտասարդ կադրերի նկատմանը, նպաստել է երիատասարդ սերունդների աճին: Ես առանձնապես ուզում եմ նշել այդ արժանավոր մարդու մի ուրիշ բարձր հատկանիշը՝ ինտերնացիոնալիզմը, հատուկ սերը ոչ միայն սեփական ժողովրդի, այլ նաև եղբայրակից հայ ժողովրդի հոգևոր և կուլտուրական արժանիքների նկատմանը, իսկական եղբայրական վերաբերմունքը դեպի հայ եղբայրները, գիտնականներն

ու գրողները, մշակույթի գործիչները: Նա հիրավի գիտության վաստակավոր գործիչ է, խսկական գիտնական, քաղաքացի և Ընկեր:

Այսօր Հաջի Զնդիի ծննդյան 70-ամյակի առթիվ, հայ գրականագետները բերում են նրան, եղբայրական քուրդ ժողովողի մշակույթի ազնիվ, անկաշառ, վաստակավոր մարդուն իրենց շերմ ողջույնը և անկեղծ համակրանքի խոսքը:

Հ.ԹԱՄՄՐԱՋՅԱՆ¹⁰

Հայութի արարությունը պատճենագործական է ամենի համար: Տարբար առաջնային արարությունը կամ պատճենագործական է ամենի համար: Հայութի արարությունը պատճենագործական է ամենի համար: Այս պատճենագործական արարությունը պատճենագործական է ամենի համար:

¹⁰ Տես՝ սույն գրքույկի ցանկ 3:

ՀԱԶԻԵ ԶՆԻԻ

Ոմանց համար հայր է... ոմանց՝ հորեղբայր, ոմանց՝ ընկեր է, ոմանց պապիկ... Բայց բոլորի համար Յաջիե Զնդի է... քրդական սովետական մշակույթի կենտրոնական դեմքը, ազնիվ քաղաքացին, բարի խղճի և խորհուրդի տեր մարդը...

Ավելի քան չուտ, մինչև մեծատաղանդ ռեալիստ Ակսել Բակունցը կիորդորեր. «Այ, դոչադ եք, «Մամ ու Զինի» նման քան ստեղծեք», երիտասարդ Յաջին արդեն գգացել էր, որ քուրդ ժողորդի ստեղծած ամենամեծ գանձը դա նրա հոգևոր մշակույթն է, նրա երգը:

Մի նոր Շեքսպիր պետք է լիներ՝ ստեղծելու համար «Մամ ու Զին»-ի համարժեքը: Իսկ 30-ական թվականներին քուրդ սովետական մշակույթի անդաստանում ուրվագծված Արաբ Շամիլով, Յաջիե Զնդին, Ամինե Ավդալը, Զարդոյե Գենջոն և ուրիշներ հեռու էին այդպիսի մոնումենտալ մտադրություններից:

Յաջիե Զնդին բարվոք համարեց քիչ վարել նորը, շատ հավաքել-առատորեն հասունացածը: XX դարի հռնդացող տեխնիկան, ռադիոն, կինոն, հեռուստացույցը, ռարիզ երգերը աննհօգի քանակի արագահոս գետն էին նետում Ֆուկլորի վարդերն ու ծաղիկները, որոնք դեռ այնքան պետք են մարդուն մարդկայնացնելու գործում... Յաջիե Զնդին քափ-քրտինք մտած՝ հավաքում էր դրանք: Յավաքեց հակերով, զամբյուղներով. «Զամբյուղավաճառը», «Մամ ու Զինը», «Մամեն ու Այշեն», «Սիաբանդն ու Խաջեն», «Խանե ճանգեռինը» հարյուրավոր հեքիաթներ, գրույցենր, երգեր... հավաքեց, դասակարգեց, իմաստաբանեց և հանձնեց հավերժությանը...

Յենց դա էլ եղավ նրա մեծագործությունը, հենց դրանում էր նրա տաղանդը, նրա տարերը... Ոգեշնչված, հարստացած ժողովրդի բառ ու բանով, հիացած ժամանակի մեծագործություններով, նա հնի ու նորի հակադրման հենքի վրա հյուսեց ներբողների ու պատճվածքների ստվար մի շարք, ողողեց «Յավարի» (Օգնություն) հայրենանվեր վեպը ժողովրդական դարձվածներով, ոճերով, իմաստությամբ, քաղցրացրեց մանուկների համար կազմած դասագրքերը հոգեզմայլ գրույցներով, զվարճակի առակներով, ասացվածքներով, ապացուցեց, որ քուրդ շինականի լեզվով հնարավոր է թարգմանել Խայամ ու Գյորե, Բայրոն ու

Պուշկին, Խսահակյան ու Լերմոնտով... Նման մեծերից քուրդ ժողովրդի խոհեմ զավակը սովորում էր վարպետություն, իմաստություն, սովորում էր ստեղծել ժողովրդի համար, մերկել ժողովրդին: Նա երբեք իր անձը չի զատել սովորական մահկանացուներից ու դրել բարձր պատվանդանին, այլ միշտ ասել է. «Ես ել ձեզ հետ, ես ել ձեզ նման»:

Չատ դառնություններ է կրել Յաջին Զնդին կյանքում. էլ գաղթ, էլ սով, էլ հարազատների կորուստ, որբություն, բանտ, հիվանդություն: Դայ մեծ բանաստեղծ Յովհաննես Շիրազի ասածի պես նա անցել է ծխնելույզանման բազում դառը օրերի միջով, բայց մնացել է մարդ ու մաքուր: Ես կարող եմ ավելացնել, որ նա եղել ու մնում է բախտավոր մարդ. բախտավոր ոչ նիայն իր հավատարին, ինքնանգեր կյանքի ընկերով, հայրապաշտ զավակներով, այլ հիմնականում նրանով, որ սիրել է իր աշխատանքը, ապրել է նրանով...

Կյանքում, կենցաղում զարմանալիորեն համեստ, սակավապես այդ մարդը բառիս ամենադրական իմաստով ագահ է ստեղծելու, աշխատելու գործում: Այս պահին էլ, երբ նրա ականջներին հնչում է յոթանասունամյակ բառը, թվում է, թե նա ափսոսում է, որ չի հասցել հրատարակելու յոթանասուն հատոր հերթաք, յոթանասուն պատում «Ոստամե Զալ», յոթանասուն վեպ և այն, և այլն...

Աշխատանքը նրա համար ինչ-որ բանից ազատվելու կամ ինչ-որ բան ստանալու ժամանակավոր միջոց չի եղել, այլ՝ մշտագործ, կենսական մի երևույթ, ուրախությունների և տիրությունների հանապազորյա պահանջ...

Կես դար շարունակ Յաջին Զնդին իր գիտակցական ամբողջ կյանքն ու կորովը նվիրաբերել է ժողովրդի մշակույթին:

Նա ժողովրդից հավաքել, պահպանել է լավը, գեղեցիկը, ընդունակ իր մեջ պահպանելով նաև մեր ժողովրդի ազնիվ առաքինությունները: Տարացրիկ քուրդ ժողովրդի գանձերի մի կղզի է նա, որ մեր ժողովրդի հոգու գանձերը կյանքի հեղեղներից փրկած՝ տանում հանձնում է հետագա սերունդներին: Թող մեզ համար Նոյ նահապետի պես գոյատևի նրա բարի անունը, թող իր մեծահանդես

բազում փառքերի դեռևս մեկ միավորը լինի նրա փառապանծ յոթանասունամյակը:¹¹

ՖԵՐԻԿԵ ՈՒՍԾՎ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ, ԱԶՆԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Վաթսունամյա գրական, գիտական մանկավարժական - հասարակական ծանրակշիռ վաստակով է Հաջիե Զնդին բոլորուն իր ծննդյան 80 - ամյակը: Բոլորում է՝ զարդարված անսահման նվիրվածությամբ հարազատ քուրդ ժողովրդին և նրա մշակույթին, հայ ժողովրդի հետ քուրդ ժողովրդի բարեկամությանը:

Ինչպես Հաջիե Զնդիի պապերի, այնպես էլ նրա սեփական ճակատագիրն անբաժան է հայ ժողովրդի ճակատագրից, Սովետական Հայաստանի հասարակական ու հոգևոր կյանքի պատմությունից:

Հայոց Մեծ եղեռնի օրերին Արևմտյան Հայաստանում անգնահատելի գործունեություն ծավալած Սերգեյ Գորոդեցկին Շովի. Թունանյանի մասին գրած հանրահայտ հուշերում արձանագրել է. «Հովհաննես Թունանյանը մեզ ուղեկցեց մինչև կյայրան և հրաժեշտ տալիս մի անգամ էլ կրկնեց այդ խոսքը... Չնորանաք և քուրդ երեխեքին, նրանք էլ ենպես անտիրական են, ոնց որ մերոնք»:

Այս երեխեքից էր և Կարսի մարզի Յամանչայիր գյուղից գաղթած, հայ որբերի հետ որբանոցներում մեծացած Հաջիե Զնդին, որ այնուհետև ավարտելով Լենինականի մանկավարժական ուսումնարանը և ապա Երևանի համալսարանի բանասիրա-

¹¹ Անվանի քուրդ գրող Ֆերիկե Ուսըվի Ելույթի խոսքն է՝ արտասանած Հ.Զնդիի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին (25 մարտի, 1978: Շանոք. Ա.Ս.):

կան ֆակուլտետը, դարձավ իր ժողովրդի անձնվեր լուսավորիչն ու հոգևոր մշակը:

Գիտելիքին գումարվեց գեղջուկ ծնողներից ժառանգած ու վաղ մանկության օրերին ներարկված աշխատասիրությանը, որի արդյունքը Հաջի Զնդիի վաստակն է՝ թե՛ ընդգրկման լայնքով, թե՛ կշռով ու արժեքայնությամբ:

Գեղարվեստական գործերի՝ պիեսների, պատմվածքների, վիպակների ու վեպերի կողքին, որոնք հոգևոր կենսական սնունդ էին քուրդ ժողովրդի համար, այդ վաստակի գումարներից են նաև քրդական դպրոցների տարրեր դասարանների համար նրա կազմած ծրագրերը, դասագրքերը, մեթոդական ծերնարկները, քրդական նոր այբուբենը ռուսական տառադարձությամբ, քրդական ժողովրդական երգերի, վիպերգերի, առած-ասացվածքների ժողովածուները, այդ թվում «Քրդական Ֆոլկլոր», բազմահատող «Քրդական ժողովրդական հեքիաթներ», «Ռոստամն Զալ» եպոսի քրդական պատումները:

Դժվար է, իրոք, պատկերացնել մեկ անհատի ստեղծագործական-գիտական աշխատանքի նմանօրինակ տքնածան սխրանք, նկատի ունենալով նաև, որ Հաջի Զնդին հարազատ ժողովրդի մշակույթի և գրառման ու հավաքման, և ուսումնասիրության ասպարեզում բարիս բուն իմաստով առաջնեկ է: Առաջնեկ է այնպիսի աշխատասիրություններով, որպիսիք երբեւ չեն կորցնելու իրենց նշանակությունը, ճիշտ հակառակը, ինչպես տարիներ առաջ գրել է Հաջի Զնդիի երկարամյա գործընկերոն ու նվիրական բարեկամը՝ ակադեմիկոս Արամ Ղանալանյանը «ավելի ու ավելի են գնահատվելու իրու քուրդ ժողովրդի «անկրկնելի մանկության» գեղարվեստական հիմաքանչ հուշանատյաններ»:

Եվ սակայն, այս ամենով էլ դեռևս չի սպառվում «բազմակողմանի լուսավորչի» նրա գործունեությունը: Անընդմեջ նա ռուսերեն, հայերեն թարգմանաբար ներկայացրել է իր ժողովրդի բանարվեստի նմուշները, քրդերեն է թարգմանել Գ.Սունդուկյանի «Պեպոն», Շիրվանզադեի «Նամուսն» ու «Չար ոգին», Վ.Փափազյանի «Ժայռը», Ղ.Ղեմիրյանի «Քաջ Նազարը», ինչպես նաև ժամանակակիցների գործերից:

Մյուս կարևոր ոլորտը Հաջի Զնդիի անմիջական մասնակցությունն է գրական-մշակութային կյանքին: Նա մշտապես հանդիս է եկել հրապարակախոսական հոդվածներով, կազմել ու

հրատարակել է Սովետական Հայաստանի քրդական գրականության ժողովածուներ, տպագրել է ակնարկներ, գրախոսություններ, քուրդ և հայ գրողների հիշարժան տարեթվերին նվիրված խոսքեր...

Իր այդ ծառայություններով, հավասարապես և ճարդկային ազնիվ նկարագրով ու վարջով Հաջի Զնդին մշտապես վայելել ու վայելում է հայ մտավորականության ամենալայն շրջանների սերն ու հարգանքը: 40-50-ական թթ. Խսահակյանի, Ղեմիրճյանի, Զորյանի կյանքի օրերն անկարելի է պատկերացնել՝ որքան առանց գրողների միության, այնքան էլ, գուցե և ավելի, առանց գրականության ինստիտուտի: Գալիս էր իսնտիտուտ Խսահակյանը և զբաղեցնում մշտական աթոռը բանահյուսության բաժնում, դիմացը՝ կողք-կողքի Ա.Ղանալանյանի և Յ.Զնդիի սեղաններն էին: Անշուշտ, խոսակցությունները մի մեծ չափով վերաբերում էին բանահյուսությանը, նյութ ունենալով նաև քրդականը:

Երիտասարդական հասակից քրդական մոտիվների սիրահար Խսահակյանը «Քուրդ Անդյի», «Սիրահար Նադյոյի» կողքին քուրդ ժողովրդի բնապաշտական-բանաստեղծական նկարագրին անզուգական էջեր է նվիրել «Ուստա Կարոյում», խորհրդաշատ բազմապիսի տողեր թողել նամակներում, օրագրերում, գրառումներում, որոնցից շատերն առնչվում են այդ օրերին:

Իր երկերի ժողովածուի վրա բանաստեղծը թողել է նաև այս մաղթանքը. «Սիրելի ընկեր Յ.Զնդիին՝ լավագույն ապագայի արժանի քուրդ եղբայրական ժողովրդի անձնվեր մշակին: Սրտանց ցանկանում են Զեր գործին հաջողություն քուրդ ժողովրդի կուլտուրայի զարգացման համար»:

Արդեն իսկ 1937-ին կամայական բանտարկություն ու հալածանքներ ճաշակած Հաջի Զնդին այդ բոլոր փորձությունների, ինչպես և հետագա բոլոր բարեբախտությունների, բայց և փորձությունների միջոցով, իր գոչեղբայրների հետ միասին, անցել է առանց կիսաքայլ իսկ նահաջելու սեփական նարդկային անխառն նկարագրից ու քաղաքացիական պահվածքից, անցել է՝ մոլեռանդրեն նվիրված գիտությանը, հարազատ ժողովրդի մշակույթին, տեղահանությունից սկսած դժվարին փորձություններում կոփված հայ և քուրդ ժողովուրդների եղբայրությանը:

Այդ տարիներին նրա ջերմ վերաբերունքն ու աջակցությունը վայելած իմ և իմ սերնդակիցների անունից երախտագիտական

խոր զգացմունքներով՝ քաջառողջություն ու ստեղծագործական եռանդ եմ մաղթում սիրելի Յաջիե Զնդիին:

Ալմաստ Զարարյան¹²

ԱՄԵՆԱՌՈՒՍՈՒՑԻՉ... ԱՄԵՆԱՍԱՐԴ...

ՄԵԾԱՐԳՈ ՅԱԶԻԵ ԶՆԴԻ

Կա այսպիսի մի իմաստություն. «մուտք կա դեպի ելք է տանում, մուտք կա դեպի՝ խորը»: Ձեր մուտքը կրության և լուսավորության ասպարեզ՝ միմիայն խորը տարավ: Ավելի քան 50 տարի Ամենաուսուցչի պատվավոր խույրը Ձեր գլխին, արժանավոր հանձնառուի պատասխանատվությամբ լույս եք բուրվառում մանուկների, առավելապես քուրդ մանուկների, ուսուցման անեզերական տիրություններում:

Ձեր ինքնայրումից, Մեծն Մեսրոպին հատուկ երկունքի ժայթքումից ծնունդ առան «Քրդերեն լեզվի այբուբենը», «Դայ-քրդերեն բառարանը», «Քրդերեն լեզվի մեթոդիկան», «Տերմինարանական բառարանը», «Քրդերեն լեզվի 1-4-րդ դասարանների ծրագիրը», «Քրդական վիճակդերը», «Քրդական ժողովրդական հերիաթները», «Քրդական առածներ և ասացվածքներ» և շատ այլ գրքեր, գիտական ու մանկավարժական հոդվածներ, մտքեր, ուսումնասիրություններ:

Յարգարժան Յաջիե Զնդի, Ալագյազի նուրբ հովերի շնչով, ազնիվ տառապանքով, մեծ մարդուն, մանկավարժին հատուկ վեհ առաքելությամբ Դուք քրդերեն լեզվի մշակներին առաջնորդել եք նորանոր եզերքներ՝ մաքրագործելով քուրդ ուսուցչության «առողջությունը»:

¹² Տես՝ ցանկ 3:

Զեր բեղմնավոր կենսագրության տարիները բուրում են արարումի, իմաստության լուսաբույրով, Զեր ասքը աշխարհում Դուք հյուսել եք իբրև ազնվագույն, պարզ, անառիկ, սրտացավ, համբերատար, հայ և քուրդ ժողովուրդներին նվիրյալ մի մարդ: Դուք քրոքերեն լեզվով հնչող մի «Բարի լույս» եք ուղղված հայ ժողովրդին:

Դաշին Զնդի ասելով մարդիկ հասկացել են հայ և քուրդ ժողովուրդների անկաշառ բարեկամություն, մաքրամաքրուր ընկերություն, գտարյուն մարդ, անմնացորդ նվիրում: Կես դար, Դուք հայ և քուրդ ազգերի շուրթերին հնչել եք որպես եղբայրության խորհուրդ-խորհրդանիշ, որպես մայրենիի խաչին հավերժ գանված խաչակիր...

Գնահատելով Զեր բեղմնավոր, վաստակաշատ գործունեությունը՝ կառավարությունը Զեզ շնորհել է բազում պարզեներ:

Ընդունեցեք լուսավորության մինհստրության կոլեկտիվի, հայ ուսուցչության երախտիքի և մեծարնան խաչքուռը.

**Ուսուցիչը չի ծերանում,
ճերմակում է, չի հնանում,
ծերացե՞լ է Մաշտոցը սուրբ,
Նարեկացին քնքուշ ու նուրբ,
ծերացե՞լ է Խորենացին,
Կամ թե՝ հզոր Շիրակացին...**

Զեր 80-ամյա բեղուն ճանապարհին նոր հորիզոններ:
Բարին ընդ Զեզ...

Ա.Տ.ԴԱԽՈՒՆՅԱՆ

ՀԱԶԻ ԶԱՆ

Ներիր, սիրելիս, որ մի քիչ ուշ եմ արձագանքում քո 80-ամյակին: Դիվանդությունը, ծերությունը, Ղարաբաղի իրադարձությունները մեզ դրեցին այնպիսի վիճակում, որ չգիտեինք, թե որտեղ ենք գտնվում և ինչ ենք անում:

Բայց բողնենք այդ բոլորը:

Չաջի ջան, սիրելիս, չեմ ուզում հավատալ, որ տարիներն այդպես արագ անցան և մենք արդեն քեզ հետ միասին էլ առաջվա երիտասարդները չենք:

Բայց բոլոր դեպքերում դու մեր այն մտավորականներից ես, որ դժվարին, բայց մաքուր ու գեղեցիկ կյանք ապրեցիր և մեծ գործ կատարեցիր քո և մեր երկու ժողովուրդների մշակութային կյանքում: Ես երբեք չեմ մոռանա թե քո մասին ինչպիսի հիացմունքով էին խոսում մեր գրականության ու արվեստի վարպետները՝ Խսահակյանը, Դեմիրճյանը, Զորյանը, Մարտիրոս Սարյանը, իսկ մեր տարեկիցները միշտ էլ քեզ եղբոր պես են նայել: Այո՛, Գեղամ Սարյանը, Մահարին, Արմենը և մենք բոլորս քեզ հետ միասին մի մաքուր ընտանիքի զավակներ ենք եղել:

Տասնյակ տարիների քո քրտնաջան աշխատանքը, քո անունը միշտ վառ կմնա գիտության ասպարեզում:

Ես ուրախ եմ, որ տարիների մեր համատեղ աշխատանքը քեզ դարձրին իմ հարազատ եղբայր և դա կմնա միշտ:

Մաղթում եմ քեզ երկար կյանք և ամենայն բարիքներ: Մի քիչ լավանամ անպատճառ կիանդիպենք: Ձերմ բարևներ տնեցիներին:

Եղբայրական սիրով՝ Գ. Դովեման

20.03.88

Երևան

ԱԿԱՆԱՎՈՐ ՔՐԴԱԳԵՏԸ ՄՐՏԻ ԽՈՍՔ

Մենք՝ այս տողերի հեղինակներս, շատ վաղուց և շատ լավ ենք ճանաչում սովետական քրդագիտության ականավոր ներկայացուցիչներից մեկին՝ Յաջին Զնդիին: Թերևս, հենց դա է պատճառը, որ դժվարանում ենք գրել նրա նասին: Մանավանդ, որ ուզում ենք հակիրծ խոսք ասել՝ Ելնելով լրագրային հոդվածի ընձեռած հնարավորությունից: Այդ դեպքում, երբ նրա ապրածն ու կատարածը մենագրությունների առատ նյութ են:

Յայաստանի գիտական-քրդական հասարակայնությանը, մեր երկրում և աշխարհում քրդագիտությանը փոքրիշատե մոտ անձանց այս անունը ներկայացնելու անհրաժեշտությունը չկա: Այդ միջավայրում Յաջին Զնդիին այնքան հանրաճանաչ է, որքան ուրիշ և ոչ մի քուրու գիտնական, գրող ու հասարակական գործիչ:

Իսկ ահա «Սովետական Վրաստանի» ընթերցողներից ոչ բոլորը գուցե ինանան, որ այդ նշանավոր մարդը Սովետական Յայաստանում համարյա ամեն քրդականի սկզբնավորողն է: Ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի պատկերավոր արտահայտությամբ, Յաջին Զնդիին Յայաստանում քրդագիտության հիմնադիրն է, նահապետը և անխոնջ մշակը միաժամանակ:

Ասենք, որ ծնվել է 1908-ին, Արևմտյան Յայաստանի Ղարսի նահանգի Յամանչայիր գյուղում: Տասնյակ հազարավոր եղդի քրդերի հետ Արևելյան Յայաստան է գաղթել առաջին համաշխարհայինից հետո: Իր սերնդակիցներից քիչ հաջողակների մանկությունն ու պատանեկությունն է ապել՝ որբություն, մանկատներ, բազում զրկանքներ: Բայց միաժամանակ՝ ուսման ծարավ, որ նրան, ի վերջո, Երևանի համալսարան է բերել:

Այստեղ արդեն իր սերնդակիցներից հաջողակների բախտն է ունեցել. աշակերտել է Յրաչյա Աճառյանին ու Մանուկ Աբեղյանին, Արտեն Տերտերյանին ու Գրիգոր Ղափանցյանին, հայագիտության մյուս մեծերին: Նրանցից անխոնջ աշխատասիրության ու գիտությանը նվիրվածության դասեր է առել, հենց նրանց հորդորով ու աջակցությամբ ուոր դրել բանասիրության անդաստանն ու բոլորանվեր տրվել նրանց:

Ինչո՞վ է զբաղվել Յաջին Զնդիին շուրջ վեց տասնամյակ: Կարելի է ասել՝ սովետական քրդագիտության հետ կապված ամեն

բանով. քրդերենի առաջին դասագրքերն է գրել, քուրդ առաջին մանկավարժներից մեկը եղել, առաջիններից մեկը զբաղվել պազային լեզվով գիտական և գրական գործունեությամբ:

Սակայն, եթե ցանկանանք նրա ամբողջ կատարածից, այնուամենայնիվ, առանձնացնել մի բան, ապա դա բանահյուսությունը կլինի: Այստեղ արդեն նա «առաջիններից մեկը» չէ, այլ սովետական քրդական գիտական բանահյուսության ուղղակի հիմնադիրը և այդ բնագավառի ամենաականավոր դեմքը: Դենց այստեղ է, որ Դաշիե Զնդին դրսնորել է իր մեծ ուսուցիչների ամենաբնորոշ գծերը՝ պրատուն միտք, անօրինակ եռանոց, գործի նկատմամբ արտակարգ սեր: Արդյունքը՝ քրդական հիմնալի բանահյուսության բազում հատորներն են, դրանց խորապես գիտական մշակումը և դասակարգումը, այն հսկայական դեռևս անտիպ նյութը, որ նա ունի ծեռքի տակ և որի վրա մեղվազան շարունակում է աշխատել:

Դապա նրա մի շարք ծանրակշիռ աշխատություննե՞րը՝ նվիրված իայ և քուրդ ժողովուրդների բարեկամության թեմային: Նրա գոչի արգասիք գեղարվեստական ստեղծագործություննե՞րը, որ լուս են տեսել քրդերեն, հայերեն, ռուսերեն ու այլ լեզուներով: Դապա հայերենից, ռուսերենից, վրացերենից նրա կատարած բարձրարժեք բարգմանություննե՞րը քրդերեն: Դապա տասնամյակների նրա բեղմնավոր հասարակական գործունեությո՞ւնը (ՀԳՄ վարչության անդամ, քուրդ գրողների մասնաճյուղի նախագահ, տարրեր գիտական խորհուրդների անդամ և այլն): Դասախոսական աշխատա՞նքը երևանի հանալսարանի արևելագիտության ֆակուլտետում:

Կարելի է և էլի շարունակել: Սակայն, բավական է, երևան: Ոչ, չի կարելի չնշել, որ Դաշիե Զնդին այսօր էլ հպարտանում է Եղիշե Չափենցի, Ալկել Բակունցի, Ավետիք Խսհակյանի, Դերենիկ Ղեմիրյանի, Ստեփան Զորյանի, Յրացյա Քոչարի հետ իր ջերմ բարեկամությամբ, Աղասի Խանջյանի հետ իր անձնական ծանոթությամբ, որի առիթը Դայաստանում քրդական մշակույթի զարգացման նկատմամբ, վերջինիս շահագրգիռ, հոգատար և ուշադիր վերաբերմունքն է եղել: Ծանոթություն, որ տարրեր հերյուրանքների թվում, դժմակ 37-38-ին մեղադրանքի ձևով պիտի ներկայացվեր գիտնականին և... առիթներից մեկը դառնար նրա բանտարկության: Դավանաբար, սա կենսագրական այն եզակի միջադեպն է, որ

ՍՈՐՄ-ում առաջին քուրդ դոկտոր-պրոֆեսորը մտաբերում է որպես միշտ թարմ վիրավորանք ու անընդհատ ցավացնող վերք...

Ուզում ենք ավելացնել նաև, որ ՀՍՍԴ գիտության վաստակավոր գործիչ, իրաքի ակադեմիայի պատվավոր անդամ Յաջիկ Զնոհին Վրաստանի, մասնավորապես, վրաց արևելագետների անկաշառ բարեկամն է, անձնական հազար թելերով կապված է Թբիլիսիի հետ և որ հենց մեր մայրաքաղաքից է սկսվել նրա՝ գիտակցական կյանքի ուղին: Մի հանգանանք, որ նա սիրով է հիշում և՝ ամեն պատեհ առիթով:

Այնպես որ, նաև մեր հանրապետության մտավորականության շատ ներկայացուցիչներ սիրով կցանկանային ողջունել ականավոր քրդագետի ծննդյան 80-ամյակը, որը հանդիսավորապես նշելուց նա իրաժարվել է, սակայն, որը արժանվույնս արձագանք է գտել Յայաստանի մամուլում և գիտական-գրական միջավայրում:

Ընդունեցեք, պրոֆեսո՞ր, նաև մեր սրտի խոսքը:

**ԻՌԱԲ ՄԵԳՐԵԼԻԶԵ
ՄՐԱՉ ԶԱՅԱՐՈՎԿ¹³**

¹³ Տե՛ս՝ ցանկ 3:

ВЕЛИЧИЕ УЧЕНОГО И ГРАЖДАНИНА

Аджие Джнди прошел тернистый и сложный путь жизни. Родился в 1908г. в селе Аманчайир Карской области в крестьянской семье. Судьба уготовила ему и тысячам его сограждан горькие испытания. Ему только исполнилось 6 лет, как началась первая мировая война, во время которой, спасаясь от преследований, убийств и грабежей семья Джнди приютилась в Армении, курдском селе Алагяз.

Его родители умерли на чужбине, Аджи и его брат оказались в американском доме для сирот. Эти годы оставили глубокий след в памяти Аджие Джнди. В тяжелейших условиях без какой либо поддержки одаренный юноша определил магистральный путь своей жизни после окончании Гюмрийского педагогического техникума. В 1929-30г. Аджие Джнди уже преподает курдский язык в сельских школах, а затем в Закавказском курдском педагогическом техникуме.

Весьма примечательно, что имя и деятельность еще совсем молодого Аджие Джнди присутствует практически во всех областях, связанных с курдской культурой и курдоведением. Выполняя большой объем работы он совмещал несколько обязанностей. Так, в начале 30-х годов он одновременно преподавал в курдском техникуме, работал в курдской газете "Риа таза", вместе со своей супругой Зейнава Иво работали в редакции курдских радиовещаний в Ереване. Несмотря на крайнюю загруженность, он заканчивает филологический факультет Ереванского университета и в 1933г. поступает в аспирантуру. В 1932г. он становится членом федерации писателей Армении и одним из его основателей. В 1934г. он - делегат I съезда писателей Советского Союза. Аджие Джнди был одним из организаторов Всесоюзной курдоведческой конференции (1934г.), где выступил с докладом (единственным на курдском языке). С 1934 по 1968гг. он являлся членом правления Союза писателей Армении а с 1930-1968гг. председателем секции курдских писателей.

Начавшаяся в Советском Союзе в конце 30-х годов волна террора коснулась и Аджие Джнди... Над его головой сгустились тучи. В 1937г. Аджие Джнди лишили права преподавать в курдском техникуме. Любопытна мотивировка его отстранения от работы: "...за

националистические взгляды; за то, что приютил у себя дома и трудоустроил Халеда Джалаля Заде, осужденного за "контрреволюционную деятельность" и освобожденного из тюрьмы (Халед Джалаля Заде был курд из Турецкого Курдистана, спасаясь от преследований нашел убежище в Армении). Наконец его обвиняли в том, что он в курдских учебниках отвел место "контрреволюционеру Арабу Шамилову", который в то время по сфабрикованному делу находился под арестом. Его отстранили от работы и из Института истории и литературы. 18 марта 1938г. Аджие Джнди арестовывают по вымышленному обвинению "подстрекательство курдов-езидов против советского строя". Во время ареста были уничтожены письма, полученные им от Джалаеда Бадирхана. Хрупкий, мягкий по характеру Аджие Джнди проявил удивительную стойкость и до конца отрицал выдвинутое против него обвинение. Ровно через год в марте 1939г. суд оправдал его и талантливого курдского писателя, его ближайшего друга Джардо Генджа.

Казалось бы, все уже позади. Он мог включиться в работу на благо родного народа. Но не тут то было. Травля по отношению к нему продолжались... К нему прикрепили ярлык "неблагонадежности". В результате он долго оставался без работы. Находясь в безвыходном положении он обратился к видному русскому писателю Александру Фадееву с просьбой оказать содействие в преодолении атмосферы травли и для трудоустройства. В архиве А.Джнди сохранилась копия телеграммы Фадеева,¹⁴ после чего его приняли на работу. В этих трудных условиях он в 1940 г. защитил кандидатскую диссертацию по одному из шедевров курдского фольклора "Кар у Кулыке Слемане Сливи".

В конце 1930-х годов многие очаги курдской культуры были закрыты. С этого времени до середины 50-х годов нужно было приложить большие усилия, чтобы наложенные запреты не привели к полному исчезновению возможностей сохранения и развития курдской культуры, ведущая роль в которой принадлежала Советской Армении.

В годы "оттепели" с середины 50-х годов начался новый этап развития культуры советских курдов и науки о курдах. Повсеместно

¹⁴ "Я договорился с Арутюняном. По возвращении он поможет. С приветом Фадеев". (28 октября, 1939г.)

видная роль в этом деле принадлежит Аджие Джнди. Налаживание возобновления издания газеты "Рúa таза", преподавание курдского языка и литературы в Ереванском педагогическом техникуме, а затем на курдоведческом отделе факультета востоковедения Ереванского университета, заведование отделом курдоведения Сектора (в дальнейшем Института) востоковедения Академии наук Армении, секцией курдских писателей при Союзе писателей Армении и ряд других обязанностей ученый патриот выполнял с завидной аккуратностью и плодотворностью. Научная и научно-педагогическая работа Аджие Джнди высоко оценивалась в научных кругах Армении и Советского Союза. В 1964г. без защиты диссертации ему присваивают ученую степень доктора филологических наук, в 1966г. получает звание профессора. Он был членом ученых советов нескольких институтов, одним из немногих, которому было присвоено почетное звание "Заслуженный деятель науки", награжден рядом правительственныех орденов, медалей, почетных грамот.

Ведущее место в обширной научной, научно-педагогической и общественной деятельности ученого занимала курдская фольклористика. Профессор Аджие Джнди заслуженно считается ведущим и общепризнанным собирателем и исследователем курдского фольклора, этой бесценной сокровищнице курдского культурного наследия. В числе опубликованных им работ по этой тематике такие фундаментальные труды как объемный "Курдский фольклор" (1936г.), "Курдские пословицы и поговорки" (1985г.) пятитомник курдских народных сказок и др. Велики заслуги ученого в исследовании актуальных проблем курдской фольклористики. Истоки курдского эпоса "Дым дым", общности сюжетов в некоторых произведениях Шекспира с курдской действительностью, курдские варианты сказаний Ростам Зала, Мам и Зин, вопросы мастерства курдских сказителей, роль крупных ученых востоковедов Марра и Орбели в курдоведении - эти и ряд других исследований Аджие Джнди, представляют большую ценность в курдоведении. Ему принадлежат значительные заслуги в разработке проблем курдской грамматики, правописания и терминологии. При ознакомлении с научным и творческим наследием Аджие Джнди, невольно встает вопрос: как ему удалось выполнить этот поистине громадный объем работы? Вот некоторые данные, подтверждающие это: им издано 16 книг по фольклористике и

литературоведению, 14 сборников курдского фольклора, 7 книг по научно-педагогической тематике, 33 учебника по курдскому языку и литературе, его художественный роман "И пришла весна" издан на курдском, армянском и русском языках. Им переведено на курдский и осуществлено издание 19 книг, содержащих произведения армянских, русских и других писателей и поэтов. Его перу принадлежат 200 научных статей, опубликованных на разных языках. Показательно, что заслуги и авторитет большого ученого признавались повсеместно. Об этом свидетельствуют 170 статей о нем, его деятельности, которые вышли на разных, в том числе и иностранных языках.

Эту громадную работу, проделанную Аджие Джнди обусловили два фактора: а) беспредельная преданность родному народу и его культурному наследию; б) высокая культура работы. Все, кто знал Аджие Джнди поражались его точностью и аккуратностью, он высоко ценил время, которое у него планировалось по дням, неделям, месяцам и выполнялось точно.

Професор Аджие Джнди пользовался большим увожением в среде элиты армянской интеллигенции. В его библиотеке большое количество научных и художественных изданий с дарственными надписями классиков армянской литературы Аветика Исаакяна и Ованеса Шираза, крупных ученых академиков А.Оганесяна и А.Ганаланяна и многих других. В небольшой статье невозможно охватить весь спектр деятельности Аджие Джнди. Его отличала высокая культура и неподдельная интеллигентность, доброта и открытость для всех. В его архиве десятки писем от самых различных людей - ученых, студентов солдат, людей, оказавшихся в беде, в тюрьмах... Он делал для людей все, что было в его силах.

С полным правом можно считать, что одним из условий плодотворной деятельности Аджие Джнди была его спаянная семья, спокойная домашняя обстановка. У Аджие Джнди было много наград. Но самая большая награда - это любовь и уважение его благодарного народа, который бережно хранит его память и уготовил ему одно из почетных мест в пантеоне выдающихся людей Курдистана.

Шакро Мгоу¹⁵

¹⁵ Stein ցանկ 3:

ՔՈՒՐԴ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Դաշիե Զնդիի քրդագիտական բազմարդյունք գործունեության մեջ վճռորոշ և առաջնակարգ նշանակություն ունի նրա բանագիտական հարուստ ժառանգությունը, որն սկսվել է, կուտակվել և ձևավորվել 1930-ական թվականների սկզբից, նրա գիտական նախաքայլերից ի վեր:

Յուրաքանչյուր ժողովորդի, հոգևոր մշակույթի համար բացառիկ արժեք ունի նրա բանավոր ավանդությունը, որն իր մեջ է ամփոփել ու խոտացրել տվյալ ազգության հազարամյակների պատմության, նյութական ու հոգևոր մշակույթի, կենցաղի, վարք ու բարքի, կրոնածիսական հավատալիքների ընդհանրացրած պատկերը, առասպելա-բանաստեղծական մտածողության, եթնիկական մտահայեցությունների, աշխարհինկալման, ազգային իդեալի ու ձգտումների հարուստ ու բազմաբղետ համայնապատկերը:

Այս ինաստով քրդական բանավոր ավանդությունն իր հարուստ երփնապնակով՝ պատմավիպական, երգային-քնարական, ասութարանական ժամերով, ծիսա-հավատալիքային և կրոնառասպելաբանական համալիրով Արևելքի ժողովուրդների եթնիկական մշակութային ժառանգության մեջ բացառիկ պատվավոր տեղ է գրավում ժողովորդի անցյալի ու ներկայի պատմության և մշակույթի հետազոտման համար, ունի առաջնակարգ սկզբնադրյուրի նշանակություն:

Առավել քան մեկուկես հարյուրամյակ է, ինչ արևելյան ու արևմտյան տարրեր ազգերի պատկանող մասնագետների սկեռուն ուշադրության կենտրոնում է պահված մնում քրդերի լավագույն մշակութային ժառանգությունը՝ նրանց անզուգական բանավոր ավանդությունը: Դա մտավորականությունը և անտարրեր չի մնացել քրդական հարուստ ու ինքնատիպ բանահյուսության նկատմամբ և սկսած Մեծն Արովյանից և դեռ նրանից էլ առաջ (նկատի ունեն XVIII դարի մատենագիր Մովսես Տաթևու քրդական բանահյուսության ծեռագիր հավաքածուն) մինչև Կոմիտաս ու հետնորդները զբաղվել են քուրդ ժողովորդի բանահյուսական ու երաժշտական հուշարձանների հավաքմամբ, հետազոտմամբ ու արժեքավորմամբ:

1930թ. Յաջիե Զնդին բնակվելով և քրդերեն դասավանդելով նախկին Յաջի Խալիլի շրջանի Ղոնդախսագ գյուղում¹⁶ սկսում է տեղի քուրդ բնակչությունից գրի առնել նրա բանավոր վիպական ավանդության մի շարք արժեքավոր նմուշներ: Յաջիե Զնդիի բանահավքչական այս նախաքայլերը նրա հետագա ողջ կյանքի ընթացքում դառնում են նախադեպային և կանխանշում նրա գիտական գալիք ճակատագիրը, որն այնքան արգասարեր եղավ թե հեղինակի, և թե՝ մանավանդ խորհրդահայ քրդագիտության հետագա զարգացման համար:

Յաջիե Զնդիի այս նախաձեռնության հետևանքն է դառնում անշուշտ այն, որ մեկ տարի անց, 1931թ. աշնանը, երբ Յայաստանի Կուլտուրայի պատմության ինստիտուտը անվանի հայագետ ու արևելագետ պրոֆեսոր Ասատուր Խաչատրյանի գլխավորությամբ կազմակերպում է քրդական բանահավքչական անդրանիկ արշավախումբը, նրա մեջ, ի թիվս այլոց («Ռյա Թագա» թերթի խմբագիր Զարդոյե Գենջօ-Արմենակ Գենջոյան, կոնպոզիտոր Կարո Զաքարյան) ընդգրկվում է նաև Յաջիե Զնդին: Սա պատմության մեջ առաջին քրդագիտական արշավախումբն էր, որը մեկ ամսից ավելի շրջելով Ապարանի, Թալինի, Էջմիածնի, Աշտարակի եզրի քրդերով բնակեցված գրեթե բոլոր գյուղերը, գրանցում է գգալի բանակությամբ վիպական, երգային ու երաժշտական բանահյուսության արժեքավոր նմուշներ: Յ.Զնդիի կողմից քրդական բանահյուսական նյութերի գրանցումը կատարվում է հաջորդ տարիներին ևս: Այս անգամ՝ 1932 և 1933թթ.. Կուլտուրայի պատմության ինստիտուտի կազմակերպած բանահավքչական արշավախմբերում, որոնք արդեն գլխավորում էր անվանի բանագետ ու արևելագետ Կ.Մելիք-Օհանջանյանը: Այդ արշավախմբերին մասնակցում էին նաև երիտասարդ բանագետ, հետագայում Յաջիե Զնդիի երկարատև տարիների գործընկեր Արամ Ղանալանյանը և քրդերենին քաջագիտակ, անվանի բանահավաք Շահեն Կումիկյանը: Արշավախմբերը այցելելով Աշտարակի և Թալինի շրջանների արևմտահայ գաղթականներով վերաբնակեցված գյուղերը, արևմտահայ բանասացներից գրառում են հայ և քրդական վիպական ու քնարական բանահյուսության բազմաթափանակ նմուշներ:

¹⁶ Այժմ՝ Արագածոտնի մարզի Ոյա թագա գ. (ծանոթագր.՝ Ա.Ս.):

Ահա այս տարիներից ի վեր, սկսնակ բանահավը Հ.Զնդին հայ անվանի և հմուտ մասնագետների ղեկավարությամբ և հովանավորությամբ հմտանում, մասնագիտանում է բանահավքչության մեջ և դառնում քրդական բանահյուսության լավագույն բանահավաքը: Բանահավքչական գործունեությունը հետագայում ևս չի լրում նրան, ընդհակառակը, մասնագիտանալով քրդական բանահյուսության հետազոտած ուղղությամբ, մասնագիտության բերումով իր հետագա կյանքի շուրջ 50 տարիների ընթացքում, Հ.Զնդին պարբերաբար գրաղվում է բանահավքչությամբ, որն արդյունավորվում է ավելի քան 400 մանուկ բանահյուսական տարածանը ու մեծարժեք նյութի կուտակումով:

Բայց բանահավքչությունը Հ.Զնդիի համար լոկ ինքնաբավ նպատակ չէր: Իր գիտական նախաքայլերն սկսելով բանահավքչական «սևագործ» աշխատանքով և խորանուտ լինելով հարազատ ժողովրդի բանավոր ավանդության բազմածալ խորքերը, որին մեծապես նպաստում է նրա ասպիրանտական մասնագիտական ուսումնառությունը պրոֆ. Ասատուր Խաչատրյանի ղեկավարությամբ, նրան մղում է հարազատ ժողովրդի բանավոր ավանդության հարուստ ժառանգության գիտական համակարգման և հետազոտության:

Իր և գործընկերների կողմից հավաքած բանահյուսական մեծաքանակ նյութերը հետագայում դարձնում են փաստագրական այն իիմնական բազան, որի վրա մեկը մյուսի ետևից երևան են այս հիմնական բազան, որի վրա մեկը մյուսի ետևից երևան արժեքագալիս Զնդիի հեղինակած քրդական բանահյուսության արժեքագործությունը, տարբեր ժամրերի համահավաք բնագրերը և բանագիտական հետազոտությունները:

Հ.Զնդիի բազմամյա բանագիտական գործունեությունն ու թողած վաստակը ընդհանուր առմանք հատկանշվում են հետևյալ չորս կարևոր խնդիրների հետապնդումով.

1. Քրդական բանավոր ավանդության հուշարձանների հավաքում, համակարգում և հրապարակում.

2. Քրդական բանահյուսության տարածանը հուշարձանների գիտական համահավաք բնագրերի կազմում և ուսումնասիրում.

3. Քրդական բանահյուսության ընտիր նմուշների հայերեն և ռուսերեն թարգմանություններ, վերամշակում և հրապարակում.

4. Յայ և քուրդ ժողովուրդների բանահյուսական փոխառնչությունների հետազոտություն:

Առաջին երկու խնդիրների իրագործումն սկսվում է նրա գիտական առաջին քայլերից իսկ՝ 1930-ական թթ.. կեսերից: 1936թ. Հ.Զնդին իր գործընկեր, քուրդ ազգագրագետ Ամինն Ավդալի համագործակցությամբ հրատարակում է «Քրդական Ֆոլկլոր» բազմաժամկետ ստվարածավալ ժողովածուն, որն, ինչպես իրավացիորնե գտնում են, ցարդ մնում է քրդական բանավոր ավանդության լավագույն հանրագիտարանը: Իսկ նույն 1936-ին, երաժշտագետ Կարո Զաքարյանի համագործակցությամբ հրատարակում է «Քրդական ժողովրդական երգեր» խորագրով ժողովածուն, երգերի նոտագրությամբ, որն իբրև քրդական երգային-երաժշտական բանահյուսության արգասիքների հավաքածու՝ առաջինն էր իր տեսակի մեջ:

Հետագայում՝ 1957-ին և 1988-ին Հ.Զնդին հրատարակում է բանահյուսական երկու նոր ժողովածու և «Քրդական Ֆոլկլոր» և «Գարուն» խորագրերով, երկուսն էլ կազմված բանահյուսական նոր նյութերի հիման վրա:

Ասպիրանտուական ուսումնառության տարիներին Հ.Զնդին ծեռնամուս է լինում քրդական վիպա-հերոսական բանահյուսության հուչարձաններից մեկի՝ «Կառ ու Քուլուկե Սլեմանն Սլիվի» վիպերգի բանագիտական քննությանն ու արժեվորմանը, որը 1940-ին պաշտպանում է իբրև թեկնածուական ատենախոսություն, իսկ 1941-ին հրապարակում առանձին գրքով: Մրանով մեզանում փաստորեն սկիզբ է դրվում քրդական վիպական հերոսական ավանդության գիտական ուսումնասիրությանը: Քրդական վիպական բանահյուսության լավագույն ննուշների հրապարակումն ու հետազոտումը այնուհետև դառնում է Հ.Զնդիի բանագիտական ուսումնասիրությունների առանցքային խնդիրներից մեկը: 1950-ական թվականներին նա հայերեն թարգմանությամբ և առանձին գրերով, առաջաբաններով ու ծանոթագրություններով հրատարակում է «Մամե ու Զինե» քրդական վիպերգի և «Քյոռօղլի» եպոսի քրդական պատումները: Նույն կերպ նա 1962-ին Մոսկվայում ուսուերեն լեզվով հրատարակում է «Քրդական վիպերգեր» աշխատությունը, իսկ 1977-ին երկանում քրդերեն լեզվով հրապարակում է «Ռոստամն Զալ» եպոսի քրդական պատումները գիրքը, որին նախորդել էր 1975-ին տպագրած «Ռոստամն Զալի» քրդա-

կան պատումների հարցի շուրջը արժեքավոր ուսումնասիրությունը: Դարկ է նշել նաև, որ Հ.Զնդին կազմել և հրատարակության էր պատրաստել քրդական երկու վիպերգի բնագրեր՝ աստվածաշնչյան թեմաներով՝ «Ուսըվե նավյա» և «Ուսըվ և Զալիխա», ինչպես և մի ընդարձակ ուսումնասիրություն՝ նվիրված քրդական հանրահայտ «Դըմ-դըմ» էպոսին, վերջինի քրդերեն ու հայերեն տարրերակներով հանդերձ:¹⁷

Քրդական վիպական ավանդության հաջորդ բնագավառը, ուր իր մեծագույն լուման է ներդրել Հ.Զնդին՝ ժողովրդական հեքիաթներն են:

Քրդական հեքիաթների գրական վերամշակմամբ, զանգվածային ծանուցմամբ, հայերեն, ռուսերեն ու քրդերեն հրատարակմամբ նա տակավին գրաղվել է 1940-ական թթ.. սկզբներից: Սակայն, երբ 1950-ական թթ.. վերջերին սկսվեց հայկական հեքիաթների համահավաք բազմահատոր գիտական հրատարակությունը, Հ.Զնդին նույն սկզբունքներով նախաձեռնեց քրդական հեքիաթների գիտական համահավաքի կազմումը, որը նա պատվով իրականացրեց 1960-1980-ական թթ. ընթացքում, հրապարակ հանելով քրդական հեքիաթների հինգհատորյա¹⁸ համահավաքը, որն աննախաղեպ երևույթ էր քրդագիտության մեջ:

Նույն կերպ նա, դարձյալ հայ բանագիտության բարերար ազդեցությամբ, 1960-ական թթ. սկսած հավաքում, կազմում և հրատարակության է պատրաստում քրդական ասութաբանության ամենասիրված ու տարածված ժանրերից մեկի՝ առաջ-ասացվածքների մեծածավալ երկիհատոր գիտական համահավաքը, շուրջ 30 հազար առաջ-ասացվածքների բնագրերի ընդգրկմամբ, որից ցարդ հրատարակվել է առաջին հատորը (1985թ.), իսկ երկրորդը մնում է անտիպ: Այս համահավաքը ևս մեծարժեք ներդրում էր քրդական բանագիտության մեջ:

Եվ, ի վերջո, Հ.Զնդիի ամենատես հայացքից դուրս չի մնացել նաև քրդական հարուստ քնարական-երգային բանահյուսությունը: Վերևում արդեն տեսանք, որ նա դեռևս 1936-ին Կարո Զաքարյանի

¹⁷ «Դըմ-դըմ» էպոսի քրդերեն տարրերակները տպագրվել են Ետմահու, 2005թ. (Ժամորագր.՝ Ա.Ս.):

¹⁸ Քրդական հեքիաթների բազմահատորյակի 6-րդ հատորը լույս տեսավ Ետմահու 2005թ. (Ժամորագր.՝ Ա.Ս.):

հետ, հրատարակել էր իրենց հավաքած քրդական ժողովրդական երգերի անդրանիկ ժողովածուն: Քնարական երգերի նկատմամբ Զնդիի գիտական շահագրգությունները շարունակվում են հետագայում և արգասավորվում նորանոր արդյունքներով:

1970-ական թթ. նա կազմում և հրատարակում է քրդական երգերի երկու նոր արժեքավոր ժողովածու «Քրդական ժողովրդական քնարական երգեր» (1972թ.) և «Քրդական ժողովրդական երգեր» (1975թ.) խորագրերով:¹⁹

Իսկ մինչ այդ, Մեծ Հայրենականի տարիներին, երբ հատկապես պետականորեն խրախուսվում ու հովանավորվում էր նորագույն հայրենասիրական թեմաներով հորինված ժողովրդական ստեղծագործությունները, Յ.Զնդին երաժշտագետ Սամսոն Գասպարյանի հետ միասին կազմում և հրատարակում է երկու ժողովածու՝ «Հայրենիք» (1942 թ.) և «Հայրենիքի զավակները» (1943թ.) խորագրերով, ուր ընդգրկված էին քրդական նորագույն շրջանի հերոսական ու քնարական երգերը: Նույն 1942թ. Արմֆանի «Տեղեկագրում» (հ. 5) Հաջի Զնդին, դարձյալ օրվա հրամայականով պայմանավորված, տպագրում է «Հերոսական և հայրենասիրական նոտիվները քրդական բանահյուսության մեջ» ուշագրավ ուսումնասիրությունը:

Այսպես, տեսնում ենք, որ քրդական թե՛ ավանդական, և թե՛ նորօրյա բանահյուսությունը իր գրեթե բոլոր հիմնատեսակներով (վեպ, վիպերգ, հերթաք, երգ, առած, առած-ասացվածք) միշտ գտնվել են Յ.Զնդիի հետազոտական տեսադաշտում և արդյունավորել գիտական կամ հանրամատչելի արժեքավոր հրապարակումներով և ուսումնասիրություններով: Բայց Յ.Զնդին քրդական բանահյուսության հրապարակումն ու հետազոտումը չի սահմանափակել սոսկ ազգային շրջանակներում: Լինելով բնիկ հայաստանցի (ծնվել էր Կարսի նահանգում), նա կիսել էր իր հայ եղբայրակցների միևնույն ճակատագիրը (տեղահանություն, գաղթ, վերաբնակում Խորհրդային Հայաստանում, ողբանոցային կյանք Գյումրիում), ստացել էր հայկական կրթություն, երկրորդ մայրենին դարձել էր հայերենը: Գիտական դաստիարակությունն ու կոփվածությունը ծեռք էր բերել հայագիտության բուն օջախներում, ապրել

¹⁹ Քրդական ժողովրդական անտիպ երգերի նոր ժողովածուն լույս տեսավ Ետմահու, Երևան, 2008 (Ժամոթագր.Ա.Ս.):

Եր ու տառապել հայագիտության նույն հոգսերով, և, հետևաբար, հայերենն ու հայկականը, քրդերենից ու քրդականից հետո Յ.Զնդիի համար դարձել էր երկրորդ մայրական գիրկ, նույնքան հարազատ ու կենսաբեր: Ուստի, բնավ պատահական չէ, որ նա իր բանագիտական աշխատությունների օգալի մասը գրել է հայերեն, իսկ բանահյուսական բնագրերը թարգմանել է հայերեն և հրատարակել:

Այս հանգամանքը պայմանավորված էր ոչ միայն Յ.Զնդիի հայկական կրթությամբ կամ հայերի նկատմամբ ունեցած երախտագիտությամբ, այլև քրդական բանահյուսության մի հետաքրքիր յուրահատկությամբ: Բանն այն է, որ քրդական վիպական ու քննարական բանահյուսության բազմաթիվ ննուշների բանասացները, ինչպես նաև բանահավաքներից շատերը եղել են հայեր, մասնավորապես արևմտահայեր: Դայ բանասացները քրդական վիպական բանահյուսական ննուշները պատմել են կամ քրդերեն, կամ հայերեն, իսկ երբեմն էլ, երգային հատվածներով վիպական ստեղծագործությունները՝ երկլեզվյա, պատմողական մասերն ասել են հայերեն, երգային հատվածները՝ քրդերեն: Այդ կերպ գոյացել են վիպական միևնույն ստեղծագործության քրդերեն և հայերեն լեզուներով, կամ էլ երկլեզվյա խառն տարբերկներ: Այս երևույթը առկա էր թե անցյալի հայ բանահավաքների (մասնավորապես Ս.Զայլը և այլոց) գրառումներում, և թե ի՞ր՝ Դաշիե Զնդիի արևմտահայ գաղթականներից գրառած քրդական բանահյուսության ննուշներում: Այնպես որ, Յ.Զնդիի հայերեն հրատարակած քրդական վիպական բանահյուսության հուշարձանները չի կարելի սույն թարգմանություն համարել, այլ դրանց մի մասը իրավամբ Յ.Զնդին նույնությամբ գետեղել է քրդերենից իր կողմից հայերեն թարգմանած վիպերգերի շարքում:

Դաշիե Զնդիի հայերեն հրատարակած բանագիտական աշխատություններից մի բանիսի մասին («Մամե ու Զինե», «Քյոռօղլի էպոսի քրդական պատումները» և այլն) արդեն խոսք եղավ վերևում: Ավելացնենք նաև, որ նա դրանցից բացի քրդական բանահյուսության մի շարք ժողովածուներ է հրատարակել հայերեն լեզվով, որոնցից հիշարժան են 1947-ին տպագրած «Քրդական Ֆոլկլոր» բազմաժանր ժողովածուն, 1960-ին տպագրած «Քրդական ժողովրդական վիպերգեր» հավաքածուն, տարբեր տարիների (1940, 1952, 1973թթ.) հրատարակած «Քրդական ժողովրդական հերիաքներ» խորագրով երեք տարբեր ժողովածուներ, բոլորն էլ իր

բարգմանությամբ, առաջարաններով ու ծանոթագրություններով, իսկ հեքիաթների մեկ ժողովածու էլ հրատարակել է 1985թ. ռուսերեն: Դրանով Հ.Զնդին մեծ ծառայություններ է մատուցել մի կողմից քրդական ժողովրդական մշակույթին՝ նրա արժեքները լայնորեն պրոպագանիզելու առումով, մյուս կողմից հայ, մասսամբ նաև ռուս մասնագետներին ու ընթերցող լայն հասարակությանը ծանուցել ու իրազեկ է դարձրել քուրդ ժողովրդի հոգևոր մշակույթի արժեքները՝ պարարտ հող ստեղծելով քրդերենին չտիրապետող այլազգի ժողովրդագետներին, համեմատարանական լայն քննությունների համար:

Եվ, ի վերջո, հայ և քուրդ ժողովրդների բարեկամության և նրա բանահյուսության փոխառնչության մասին իր տարիների դիտարկումներն ու նտորումները Հ.Զնդին աճփոփում է հայերեն գրված «Հայ և քուրդ ժողովրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» 1965-ին հրատարակած հիանալի մենագրությամբ, որտեղ պատմական ու բանագիտական միանգամյա ճիշտ մերոդարանությամբ քննված են հետևյալ խնդիրները.

Հայ և քուրդ ժողովրդների կյանքի ու պայքարի արտացոլումը բանահյուսության մեջ. հայ և քուրդ բանահյուսական ընդհանրություններն ու փոխառությունները, դրանց փոխադարձ տարածումն ու տեղայնացումը երկու ժողովրդների բանավոր ավանդության մեջ, երկլեզվայ ստեղծագործություններն ու բանասացները, քրդական բանահյուսության գրառումն ու գնահատումը հայ բանահավաք բանասերների և գրական ու մշակութային գործիչների կողմից, քրդական բանահյուսության մշակումները հայ գրականության մեջ: Այս մենագրությունն իր գիտական անուրանալի արժանիքներից բացի, քաղաքացիական առումով քուրդ ժողովրդի մեծ վաստակավորի հոգևոր տուլքն էր հայ և քուրդ ժողովրդների դարավոր անկեղծ բարեկամության և նրանց եթնիկական մշակույթի խոր ընդհանրությունների նկատմամբ:

Այս առթիվ թերևս միանգամյան տեղին է առաջ բերել հայ մեծանուն բանաստեղծ Շովիաննես Շիրազի 1958-ին Հաջի Զնդիին ձոնած հետևյալ վեցնյակը՝ ուշագրավ բնութագրումներով.

**Ազնիվ հոգի է Հաջի Զնդին,
Ուկի կամուրջ է իրենց ու մեր մեջ,
Քուրդ Արովյանն է, անմահ է Զնդին,**

**Կանթեղ է անունն հավիտյան անշեք՝
իմ Արագածի կանթեղի նման,
Եկ, լույս տանք մինչև Մրմանց ու Սիփան:**

Ի մի բերելով Շ.Զնդիի շուրջ 60-ամյա բանագիտական անխոնջ գործունեության պատմական արժեքի բնութագիրը՝ ամենայն հավաստիությամբ հարկ է ածանագրել, որ Շ.Զնդիով է սկսվում և հիմնավորվում քրդական հարուստ բանահյուսության պարբերական ու հաճակարգված հավաքումը, գիտական սիստեմավորումը, իրապարակումն ու հետազոտությունը: Նրա անձն ու բանագիտական վիթխարի վաստակը այսօր քրդագիտության համար ձեռք է բերել դասական նշանակություն և սկիզբ դրել բանագիտական ազգային մի դպրոցի, որի շավով է այսօր ընթանում քուրդ բանագետների նոր սերունդը, անշուշտ նոր նպատակների և արդիական նոր խնդիրների հետապնդումով:

Սարգիս Չարությունյան

ՄԵԾԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Բանահավաք և բանագետ, գրականագետ, արձակագիր և բանաստեղծ, դրամատուրգ, լրագրող, թարգմանիչ և դրանց գումարած՝ հասարակական ակտիվ գործիչ: Ահա քրդագիտության այն բնագավառները, որոնց զարգացմանն ու հարստացմանն իր ողջ գիտակցական կյանքը և ստեղծագործող մտավորականի անբռոջ տաղանդն անվերապահորեն նվիրել է գիտության և մշակույթի անխոնջ մշակ՝ Մեծն Հաջիե Զնդին:

Հաջիե Զնդին (Զառուարի Հաջիե Զնդի) ծնվել է 1908 թվականի մարտի 18-ին Ղարսի նահանգի Դիգորի (Տեկորի) շրջանի Յանանչայիր քրդական լեռնային գյուղում, նահապետական կյանքով ապրող գյուղացու ընտանիքում:

Գյուղում դպրոց չկար և մանուկ Հաջին աշնան և ձմռան ցրտաշունչ գիշերներին քրդական օդաներում ունկնդրում էր ինմաստուն բանասացներին, իսկ գարնան և ամռան ամիսներին գյուղը շրջապատող զնորուխտ լեռների լանջերին արածեցնում էր իրենց գառներին: Բայց շուտով խախտվում է Հաջիի երջանիկ մանկությունը և իր գյուղի անդորրը. սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, որի արհավիրքներից գերծ չեն մնում և բարձր լեռների լանջերին ծվարած եզդի քրդերը:

Թուրքական արյունոտ յարաղանից հալածված, մեկ օրվա ընթացքում դատարկվում, ամայանում են Դիգորի շրջանի եզդի քրդերի 16 գյուղեր, այդ թվում Յամանչայիրը: Գաղթի ճանապարհին փոքրիկ Հաջին կորցնում է իր ծնողներին և մյուս հարազատներին և իր ապաստանն ու փրկությունը գտնում Ղարսում, ապա Ալեքսանդրապոլում, բացված որբանոցում: Որբանոցից դուրս գալուց հետո նա դառնում է Ալեքսանդրապոլի մանկավարժական ուսումնարանի սամ: Այն ավարտելուց հետո Հաջիե Զնդին 1929 թվականին նշանակվում է Ապարանի շրջանի քրդական Ղոնդախսագ գյուղի դպրոցի քրդերն լեզվի ուսուցիչ: Մեկ տարի անց նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտում է 1933 թվականին, այնուհետև ընդունվում է Հայաստանի նյութական մշակույթի պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: Բայց նրան վիճակված չէր ժամանակին ավարտել իր գիտական աշխատանքը: Վրա է հասնում աղետարեր 1937 թվականը, իսկ արդեն 1938-ին Հաջիե Զնդին

քուրդ մտավորական Զարդոյի («Ռյա թագա» քրդական թերթի առաջին քուրդ խմբագիր) հետ հայտնվում է «ՊԱԿ-ի բանտախցում, որտեղ նրանք մի ամբողջ տարի ենթարկվում են աննարդկային խոշտանգումների: Նրանց մեղքը կայանում էր նաև այն բանում, որ քրդերեն լույս տեսած գրականություն էին ուղարկում Սիրիա ու Լիբանան՝ քուրդ ճանաչված մտավորական և քաղաքական գործիչ Զալաղետ Բաղրիսանի անունով, որը քրդական Հոյրունի կուսակցության ղեկավարն էր և կապեր ուներ հայ Դաշնակցության ղեկավարներից մեկի՝ Վահան Փափազյանի հետ:

Սակայն ճակատագիրն այս անգամ բարեհած է գտնվում Հ.Զնդիի նկատմամբ և մեկ տարի անց (1939) նա ազատ է արձակվում՝ մնալով. համապատասխան մարմինների աշալուրջ հսկողության տակ, առանց աշխատանքի, գրեթե լիովին մեկուսացած:

Բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով՝ նա վերջապես վերականգնվում է աշխատանքի նախկին վայրում՝ Մանուկ Աբեղյանի անվան գրականության և լեզվի ինստիտուտում (1939), որտեղ պաշտպանում է թեկնածուական թեզը: Իսկ երբ 1959 թվականին ակադեմիայի համակարգում բացվում է արևելագիտության մասնաճյուղը, Դաշիե Զնդին նշանակվում է նորաստեղծ քրդագիտական խմբի ղեկավար, կարծ ժամանակ անց՝ Արևելագիտության ինստիտուտի քրդագիտության բաժնի վարիչ՝ միչև 1967 թվականը: Այդ տարիներին նա բուռն գործունեություն է ծավալում քրդագիտական հրատապ խնդիրների լուծման ուղղությամբ: Ա.Ավդալի հետ զբաղվում է քրդագետ նոր կադրեր պատրաստելով, գիտական, գրական ու հասարակական բուռն պատրաստելով, գիտական, գրական ու հասարակական բուռն գործունեությամբ: 1970-ականների կեսերին նա թողնում է պաշտոնը՝ մնալով ինստիտուտում և բաժնում իրեն առաջատար գիտաշխատող մինչև իր մահը՝ 1-ը մայիսի 1990 թվականի: Իր կտակին համաձայն նրան հողին են հանձնում Արագածի շրջանի Սիփան (նախկին Քորդի Փամփ) քրդական գյուղի գերեզմանոցում:

Դայաստանում քրդական նոր գրականության և մշակույթի սկզբնավորման առաջին շրջանից Դաշիե Զնդին իրեն հատուկ էնտուզիազմով, եռանդով ու կարողությամբ նվիրվում է քրդական գիր ու գրականության, քրդագիտության զարգացման պատվավոր գործին՝ դառնալով ոչ միայն Դայաստանում, այլ նաև ողջ նախկին

Սովետական Միությունում քրդական գրականության և քրդագիտության հիմնադիրներից մեկը:

50-ական թվականներին Հաջիե Զնդին դասախոսում է հայկական մանկավարժական ուսումնարանի նորաբաց քրդական բաժնում (1955-1959), իսկ 1968-1973թթ. Երևանի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի քրդագիտության բաժնում՝ դասավանդելով քրդերեն լեզու, գրականություն և բանահյուսություն:

Երբ ողջ Սովետական Միությունում լատինատառ այբուբենը փոխարինվեց ռուսականով, ռուսատառ քրդական այբուբենի գործը հանձնարարեցին Հաջիե Զնդիին: 1944թ. հայ և քուրդ նոտավորականներից կազմված հանձնաժողովն ընդունեց Հաջիե Զնդիի կազմած ռուսատառ այբուբենը:

Հաջիե Զնդին Հայաստանում, նախկին Սովետական Միությունում և նրանց սահմաններից դուրս մեծ համբավ է վաստակել նախ և առաջ իրեն քրդագետ և մասնավորապես՝ բանահավաք և բանագետ:

Դեռևս 1940 թվականին Հաջիե Զնդին պաշտպանության է ներկայացնում իր «Քրդական «Կուռ ու Քուլուկե Սրլեմանե, Սլիվի» վիպերգը» թեմայով դիսերտացիոն աշխատանքը և ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Սրանով Հաջիե Զնդին դառնում է գիտական աստիճան ստացած առաջին քրդագետը ինչպես Հայաստանում, այնպես էլ Սովետական Միությունում: Իսկ 1964-ին քրդագիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար, առանց դիսերտացիայի պաշտպանության, որը հազվադեպ է պատահում, նրան շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական բարձր աստիճանը: Որոշ ժամանակ անց նրան շնորհվում է նաև պրոֆեսորի պատվավոր կոչումը:

Հաջիե Զնդին քրդական ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերի և տեսակների մի քանի տասնյակ ժողովածուներ է հրատարակել: Դրանցից մի քանիսը իրենց ընդարձակ առաջարան-ներով գիտական արժեքավոր հետազոտություններ են, որոնց մի մասը նա հրատարակել է քրդերենով, իսկ մյուսը՝ հայերեն թարգմանությամբ: Յիշատակենք դրանցից ամենակարևորները. «Քրդական Ֆոլկլոր», «Քրդական ժողովրդական երգեր» (Երգահան Կարո Զաքարյանի հետ), «Կառ ու Քուլուկե Սլեման Սլիվի, Քրդական ժողովրդական եպոս» (Յետազոտություն և տեքստ՝ հայերեն և

Քրդերեն), «Քրդական ժողովրդական վիճակը» (հայերեն թարգմանությունը՝ Մ.Վեսպերի, Վ.Կարենցի, Մ.Խերանյանի, Վ.Գրիգորյանի), «Քրդական հերոսական վիճակը» (ռուսերեն թարգմանությունները՝ Կ.Քուրդուկի, Ի.Ցուկերմանի, Ա.Շամիլովի), «Քրդական ժողովրդական երգեր» (գրառումը և առաջարանը՝ Դաշին Զնդիի), «Ուստամե Զալ» էպոսի քրդական պատումները» (գրառումը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Դաշին Զնդիի), Քրդական ժողովրդական հեքիաթների 6 հատորներ (գրառումը, առաջարաններն ու ծանոթագրությունները՝ Դաշին Զնդիի), «Ուսըվ և Զալիխս» ավանդագրույցի քրդական պատումների ժողովածու (գրառումը, ընդարձակ առաջարանը և ծանոթագրությունները՝ Դաշին Զնդիի), «Ղընդըմ» քրդական էպոսի վարիանտներ (գրառումը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Դաշին Զնդիի) և այլն:

Քրդագիտության մեջ ընդհանրապես և քրդական բանահյուսության բընագավառում նասնավորապես խոչոր երևոյթ էր «Քրդական առակներ և ասացվածքներ» ավելի քան 800 էջ կազմով ժողովածուի լույս ընծայումը՝ ընդարձակ առաջարանով և ծանոթագրություններով:

Դաշին Զնդին գրականագիտական բազմաթիվ հոդվածների հեղինակ է, որոնք տարբեր տարիներին տպագրվել են Հայաստանի հայկական և քրդական թերթերի և մասնավորապես ամսագրերի էջերում՝ նվիրված քրդական գրականության պատմությունը, քուրդ գրողների ստեղծագործություններին:

1954 թվականին Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը հայերեն լույս ընծայեց Դաշին Զնդիի «Սովետական Հայաստանի քրդական գրականությունը» գիրքը: «Սովետական Հայաստանի քրդական գրականությունը» աշխատությունը Տարիներ անց, 1970 թվականին նույն հրատարակչությունը ընթերցողների ուշադրությանը ներկայացրեց նրա «Ակնարկ Սովետական Հայաստանի քրդական գրականություն» աշխատությունը, որում նա ավելի հանգանանորեն է անդրադառնություն Հայաստանում առաջարարական և առավել հարուստ դարձած քրդական գրականության պատմությանը, ավելի մեծ թիվ կազմող քուրդ գրողների ստեղծագործություններին: Այս գրքի ընդարձակ առաջարանում նա անդրադառնություն է դեռևս VII դարում Քրդստանում սկզբնավորված քրդական գրականությանը՝ ընթերցողներին ներկայացնելով քրդական գրականության դասականներ Փիրե Շարիարի (X դար), Բաբա Թահիր Համադանի (X դար), Ալի Շարիրի (X-XI դարեր), Ահմադ

Մոլլա Զըգիրիի (XII դար), Ֆակիե Տայրայի (XIV դար), Մոլլա Բատեի (XIV դար), Ահմադէ Խանիի (XVI-XVII դարեր), Նալիի (XVIII դար) անունները:

Յաջիե Զնդին մասնավորապես կանգ է առնում միջնադարի քուրդ մեծ բանաստեղծ, քրդական ազգային զարթոնքի և քրդական անկախ պետության ստեղծման առաջին գաղափարախոս Ահմադէ Խանիի անմահ «Մամ ու Զին» պոեմի վրա: Յովսեփ Օրբելին Ահմադէ Խանիին իբրև իր ազգի մեջ ամենամեծ ժողովրդականություն Վայելող քուրդ բանաստեղծի համեմատում է Ֆիրդուսու և Շոբա Ռուսթավելու հետ:

Բայց սրանով չեն սահմանափակվում Յ. Զնդիի գիտական պրատումները: Նա հեղինակ է նաև բառարանների (հայերեն-քրդերեն, Քրդերենի տերմինաբանական բառարան), տասնյակ դասագրքերի (քրդաբնակ գյուղերի միջնակարգ դպրոցների) և ուսումնա-մեթոդական ծրագրերի:

Յաջիե Զնդին իրավամբ համարվում է Յայաստանի քրդական գրականության հիմնադիրներից և նրա կարկառուն դեմքերից մեկը: Իբրև քուրդ տաղանդավոր արձակագիր նրա անունը և ստեղծագործությունները լայնորեն հայտնի են նաև բուն Քրդստանում և այժմ աշխարհով մեկ սփոված քրդական գաղթօջախներում:

Իբրև գեղարվեստական գրականության երկերի հեղինակի՝ Յաջիե Զընդին հանդես է եկել Յայաստանում քրդերեն գրեթե տապագրման առաջին տարիներից՝ ավելի կոնկրետ՝ 1931 թվականից: Նրա բանաստեղծությունները, պոեմներն ու պատմվածքները տպագրվել են սովետական քուրդ գրողների երկերի բոլոր ժողովածուներում: Յաջիե Զնդին ծառայել է նաև քրդական դրամատուրգիայի զարգացմանը: Նա հեղինակ է 1932 թվին լույս տեսած «Դեղորայքի սունդուկը» պիեսի, իսկ նրա «Մուրազ» ստեղծագործությունը երկար տարիներ ներկայացվել է Ալագյազի քրդական պետական շրջիկ թատրոնում:

Յաջիե Զնդի արձակագրի ստեղծագործությունների գլուխագործոցը համարվում է նրա «Յավարի» (Օգնություն) վեպը: Այն նվիրված է Ղարսի նահանգում բնակված և 1918թ. բռնագաղթած քրդերի մի հատվածի ողբերգական ճակատագրին:

Յաջիե Զնդին քրդական գեղարվեստական գրականության հարստացմանը և զարգացմանը ծառայել է նաև քրդական

Ժողովրդական բանահյուսության նմուշների մշակումներով, որոնք ամփոփված են «Գարուն» վերնագրով ժողովածուում:

Դայ գրողներից կատարած իր առաջին թարգմանությունները Հաջիե Զնդին գետեղում է իր «Սովետահայ գրողներ» անթոլոգիայում (1936), ինչպես նաև քուրդ գրողների քրդերեն ստեղծագործությունների ժողովածուներում: Իսկ 1963 թվին քրդերեն լույս է տեսնում «Ծաղկեփունջ» խորագրով ժողովածուն, որտեղ գետեղված են հայ գրողների քրդերին նվիրված ստեղծագործությունները՝ Դաջիե Զնդիի թարգմանությամբ: Նույն թվականին նրա և քուրդ մեծատաղանդ բանաստեղծ Ֆերիկե Ուսըվի թարգմանությամբ տպագրվեց Սայաթ-Նովայի երկերի քրդերեն ժողովածուն:

Այսպիսով, Հաջիե Զնդին քուրդ ընթերցողների սեփականությունն է դարձել Խ.Աբրովյանի, Շովի.Թումանյանի, Ավ.Խսահակյանի, Դ.Ղեմիրճյանի, Գ.Սունդուկյանի, Ալ.Շիրվանզադեի, Վ.Փափազյանի, Ջր.Քոչարի, Ն.Զարյանի, Լազորի (Հակոբ Ղազարյանի) և այլ հայ գրողների թագմաթիվ ստեղծագործությունները:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Հաջիե Զնդին քրդական թարգմանական գրականությունը հարստացել է նաև հանաշխարհային գրականությունից կատարած իր թարգմանություններով:

Մինչև օրս այսօրվա ընթերցողներին անհայտ են մնացել հայ դրամատուրգների այն ստեղծագործությունների քրդերեն անտիպ թարգմանությունները, որոնք Հաջիե Զնդին 40-ական թվականներին կատարել է Ալագյազի քրդական թատրոնի պատվերով և որոնք նեկայացվել են այդ թատրոնի բնմահարթակում: Դրանց թիվը հասնում է 15-ի:

Իր առանձին ուսումնասիրություններով Հաջիե Զնդին մեծապես ծառայել է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործին: 1965 թվականին Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս ընծայեց նրա իր տեսակի մեջ եղակի և արժեքավոր մենագրությունը՝ «Դայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ» խորագրով: Գրքի առաջաբանում և նրա բուն թովանդակությունը կազմող բաժիններում նա պատճական և բանահյուսական հարուստ սկզբնաղբյունների վկայակոչմանը վեր է հանում հայ և քուրդ ժողովուրդների դարավոր բարեկամության փաստերն ու

պատճառները և այդ բարեկամության ամենագլխավոր հիմքը հանդիսացող նրանց պատճական ճակատագրի ընդհանրությունը:

Նա առիթը բաց չէր բողոքում իր ժողովրդի երախտիքի խոսքն ուղղելու հայ ժողովրդին և այն հայ նտավորականներին, ովքեր բոլորանվեր ծառայել են քրդական գրականության և մշակույթի զարգացման և հայ-քրդական բարեկամության ամրապնդման վեհ ու սուրբ գործին, մասնավորապես արժեքավորելով հայոց գրականության մեծերի ստեղծագործական գործունեությունը այդ բնագավառում: Ահա հայկական և քրդական մամուլի էջերում տպագրված նրա մի քանի հոդվածների միայն վերտառությունները, որ այդ բանի վառ վկայություններ են. «Թումանյանը քրդերի մասին և քուրդ գրականության մեջ», «Մեսրոպյան գրերը և քուրդ ժողովրդի կուլտուրան», «Աբրովյանը և քուրդ ժողովրդը», «Ժողովուրդների բարեկամության երգիչը» (Ավ.Իսահակյանի ծննդյան 80-ամյակի առթիվ), «Զնուան մի օրվա հիշողություն» (Եղիշե Չարենցի մասին), «Մեր վարպետը» (Ավ.Իսահակյանի մահվան առթիվ), «Քուրդ ժողովրդի մշակույթի մեծ բարեկամը» (Ավ.Իսահակյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), «Դումանիստ գրողը» (Դ.Ղեմիրյանի ծննդյան 100-ամյակի առթիվ):

Հաջիե Զնդին իր խորը գիտելիքներով և իմաստնությամբ մեծ հեղինակություն էր վայելում հայ գրողների շրջանում: Նրա հյուրընկալ օջախը շատերին էր գրավում և հյուրերն ու այցելուները անպակաս էին միշտ: Բացի երևանում բնակվող իր գրչակից քուրդ և հայ ընկերներից, գալիս էին Յայաստանի հեռավոր գյուղերից՝ տարրեր առիթներով:

Գալիս էին նաև զուտ հետաքրքրությունից դրդված՝ հանրապետությունում հանրահայտ դարձած, բարձր և պատվավոր անուն վաստակած իրենց ազգակցին երես առ երես տեսնելու, նրա հետ գրուցելու, իսկ Հաջիե Զնդին շատ հաճելի գրուցակից էր: Նրանցից շատերը այն բանասացներն էին, որոնց պատճածը գրի էր առնում Հաջիե Զնդին, որոնք լույս էին տեսնում որպես քրդական բանահյուսության գոհարներ:

Հաջիե Զնդիի մեծ վաստակը քրդագիտության, քրդական գրականության և ընդհանուր վերցրած քրդական մշակույթի բնագավառում ըստ արժանվույն է գնահատվել Յայաստանում և նրա սահմաններից դուրս: Նա 1974 թվականին արժանացավ Յայաստանի հանրապետության գիտության վաստակավոր գործչի

բարձր կոչմանը, պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով և մեդալներով, այդ թվում «Ժողովուրդների բարեկամության» և «Պատվո նշան» շքանշաններով: Դայաստանի Գերագույն Սովետը նրան արժանացրել է նաև բազմաթիվ պատվոգրերի:

1972 թվին նա ընտրվեց Իրաքի հանրապետության քրդական ակադեմիայի թղթակից անդամ, իսկ ավելի ուշ՝ Փարիզի քրդագիտական ինստիտուտի անդամ:

Դաջին Զնդին մեծ տաղանդի և կրութիցիայի մտավորական էր: Քրդական «Ռյա թագա» լրագրում, դեռևս Դայաստանում քրդական գիր ու գրականության, մշակույթի զարգացման արշալույսին՝ 30-ական թվականների սկզբին Դաջին Զնդին անվանեցին քրդական մշակույթի ողնաշարը: Սա դեռևս բոլոր չեն: Ամենակարևոր և ուշագրավ փաստը կայանում է նրանում, որ երբ հետստալինյան բռնապետության տարիներին Դայաստանում քրդական մշակույթը վերածնունդ ապրեց և այստեղ հանդես եկավ քուրդ մտավորականների մի ամբողջ բանակ, ապա այս պայմաններում ևս նա շարունակեց արժանիորեն կրել այդ անունը:

Բայց ամենաբարձր, տեղին ու արժանի գնահատականը Դաջին Զնդի քրդագետին և մասնավորապես բանահավաք բանագետին տվել է նրա նախկին ասպիրանտը՝ բանասիրական գիտությունների թեկնածու, տաղանդավոր քուրդ բանաստեղծ Զարքյազե Ռաշը (Մստոյան): Նրան անվանելով քրդական բանահյուսության Դայը:

Անփոփելով մեր խոսքը Դաջին Զնդի քրդագետի և Դաջին Զնդի գրողի վերաբերյալ, կարելի է վստահորեն ասել, որ չկա քրդագիտության և ընդհանրապես քրդական մշակույթի մի այնպիսի բնագավառ, որում իր արժանի ներդրումը չունենար նա:

Կյանքի վերջին ամիսներին Դաջին Զնդին շարունակեց ապրել ստեղծագործական կյանքով, բայց մեկ այլ՝ վերհուշի և վերապրելու ձևով՝ քանզի իր հաճար միս ու արյուն, սովորույթ և բնագործություն դարձած այդ աշխատանքից նա ի վիճակի չեր անբողոքությամբ և վերջնականապես կտրվել: Այս անգամ, իր աշխատանքային սեղանի մոտ նստելու և ստեղծագործելու փոխարեն նա իր ընտանիքի անդամներին պատվիրեց այդ սեղանի վրա փոռել իր բոլոր իրատարակած գրքերը: Եվ օրվա ընթացքում մի քանի անգամ մոտենալով այդ սեղանին՝ նա դիտում էր այդ գրքերը՝ դեմքին պարզորոշ արտահայտելով հիացմունքի և

գոհունակության իր զգացմունքը: Իր ողջ գիտակցական և ստեղծագործական կյանքը նվիրելով այդ գրքերի ստեղծմանն ու հրատարակմանը՝ նա չէր կարող կտրվել իր համար գրեթե հարազատ զավակներ դարձած այդ գրքերից: Իսկ երբ զգաց իր մոտալուտ մահը՝ անկողնում պառկած նրա վերջին պատգամը եղավ. «Ինձ մի արքնացրեք քնից»: Եվ որքան էլ այս խնդրանքը անսովոր էր, այդ պահին հարազատների մտքով չանցավ, որ սա հսկապես նրա վերջին խնդրանքն է... և հանգավ լուռ, անձայն...

Սահկան շեմին էլ, իր մոտալուտ մահը զգալուց հետո էլ, Դաջին Զնոյին հարազատ մնաց իր բնավորությանը՝ իր հոգին այնպես ավանդել, որ ցավ չպատճառվի իր շրջապատի մարդկանց, այստեղ՝ իր հարազատներին:

Դանգավ Դաջին Զնոյի մարդու, անձի ճրագը, բայց ոչ երեք ստեղծագործող մտավորականի, քանզի Դաջին Զնոյի մտավորականի սեղանին դրված «ճրագները» վառ մնացին և դրանք իրենց շուրջ բոլորը լուս կսփռեն այնքան ժամանակ, որքան կենդանի կմնա իր հարազատ ժողովուրդը և նրա հոգևոր մշակույթը:

Կազիրե Աշո (Ռաշիդով)²¹ Բեղդիա

²¹ Տե՛ս ցանկ 3:

*Светя другим,
Сгораешь
сам.*
Гераклит

ПАМЯТИ ВЕЛИКОГО КУРДСКОГО УЧЕНОГО АДЖИЕ ДЖНДИ (1908-1990)

Великих курдских имен много. Это - прославленные исторические деятели как Салах ад-дин Эйюби; борцы за свободу и независимость своего ЦПСШ как Мустафа Барзани, историографы Шараф-хан Бидлиси и Мах Шараф-ханум Курдистани, поэт Ахмеде Хани... Каждая эпоха рождала своих героев, имена и деяния которых хранятся в народной памяти и запечатлены в народном творчестве, былинах и сказаниях.

Великие имена Курдистана горят, как звезды и указывают путь в будущее. К ним принадлежит имя курдского ученого Аджие Джнди, который в течение нескольких десятилетий был признанным главой курдской школы фольклористов, знатоком эпических, героических и лирических песен курдов, талантливым преподавателем и организатором науки. Путь его к вершинам знания порою был труден. Ранняя потеря родителей, жизнь в приюте не смогли сломить заложенный природой творческий потенциал, волю к жизни и обостренное чувство справедливости.

Устремленность к знаниям и просветительской деятельности были таковы, что в возрасте двадцати с небольшим лет Аджие Джнди уже преподает курдский язык в школе, а затем в курдском педагогическом техникуме. Вскоре он возглавил отдел в редакции, курдской газеты "Р'яа таза" и в редакции курдского радиовещания в Ереване. Максимальная загруженность не помешала ему закончить филологический факультет ЕрГУ и продолжить обучение в аспирантуре.

Еще в 1931г. Наркомпрос Армении организовал первую научную экспедицию для сбора устного творчества курдов. В состав экспедиции входили Аджие Джнди, а также Джардое Генджо и композитор Каро Закарян. Экспедиция побывала в курдских селениях Апаранского, Талинского, Эчмиадзинского районов Армянского ССР. Впервые образцы курдского фольклора собирали носители ջու՛լ, знатоки обычаяев и нравов народа, а также музыкант - специалист по песенному народному творчеству. Аджие Джнди совместно с Каро Закаряном, сделавшим нотную запись, в 1936г. издали песни, собранные во время этой экспедиции.

Часть собранного материала легла в основу изданного в Ереване в 1936г. первого сборника курдского фольклора, подготовленного к печати Аджие Джнди и Амине Авдалом. В нем впервые в многочисленных вариантах были представлены замечательные творения курдского народа: "Кар и Кулыке Слемане Сливи" в тридцати вариантах, "Мам и Зин" в трех вариантах, "Маме и Айше" в четырех вариантах, курдские версии "Лейли и Меджлун" в трех вариантах и 12 песен Авдале Заине. Сборник содержал также любовные, хороводные песни, легенды, сказки и детский фольклор. В последующие годы будут подготовлены и изданы еще одиннадцать сборников курдского фольклора, но эта книга занимает среди них особое место. Сборнику 1936г. суждено было стать настольной книгой многих поколений курдов и курдоведов как в нашей стране, так и за ее пределами.

Стремительное восхождение к вершинам науки было прервано внезапно. Ученого обвинили в шпионаже и контрреволюционной деятельности. Одним из поводов послужили письма видного курдского деятеля, представителя прославленной семьи Бадрханидов - Мира Джаладета Бадрхана и 24-й номер издаваемого им в Сирии журнала "Havar". В марте 1938г. Аджие Джнди арестовали, а через год оправдали и освободили. Прерванный полет к высотам знания возобновился. В 1940г. он защитил кандидатскую диссертацию на тему "Кар и Кулыке Слемане Сливи" - сочинение, заслужившее у курдов славу одного из фольклорных шедевров.

Работы Аджие Джнди стали весомым вкладом не только в курдскую фольклористику, но и в культуру Курдов. Когда поступило решение о переводе курдского алфавита на кирилицу, создание нового алфавита поручили Аджие Джнди. Задача была выполнена, и в 1946г. появился новый курдский букварь. Он был не единственным - в целом ученый подготовил 33 учебника по курдскому языку.

Помимо интенсивной научно-педагогической деятельности, Аджие Джнди в прежнем стремительном темпе продолжал собирание и исследование курдского фольклора, что можно назвать главным делом его жизни.

В 1957г. в Ереване вышел второй сборник курдского фольклора, собранного и записанного Аджие Джнди. В него были включены новые варианты эпических произведений, таких как "Мам и Зин", "Сева Хаджи", "Усыв и Залиха", "Хатем-Ханум", "Дымдым" и др. Впервые на курдском языке был издан, записанный со слов известного сказителя Ахме Чоло, один из многочисленных вариантов армянского героического эпоса "Давид Са-сунский", известного у курдов под названием "Давуте Сасуне". Все опубликованные тексты записаны на диалекте курманджи курдским алфавитом, составленным на основе русской графики. В сборник вошли также сказки, лирические и хороводные песни, пословицы и поговорки, загадки, скороговорки.

Знаменательным событием в курдоведении явился выход в свет в Москве в 1962 г. сборника "Курдские эпические песни-сказы", наиболее интересных и широко распространенных романтических и героических народных поэм, где подготовка текстов, предисловие и комментарии выполнены Аджие Джнди (запись текстов "Хадже и Сиабанд", "Лейли и Меджлум", "Кар и Кульк", "Мам и Зин").

В 1972 и 1975гг. изданы еще две книги Аджие Джнди – народные песни, а также варианты курдско-иранского эпоса "Рустами Зал". В эти же годы Аджие Джнди публикует ряд статей о курдском фольклоре, в частности о курдской народной лирике на страницах печати.

В 1985г. Аджие Джнди издает монументальный труд "Курдские народные пословицы и, поговорки" (785 стр.) представляющие собой энциклопедию жизни курдов, являющиеся своего рода моральным кодексом, передающимся из поколения в поколение. В пословицах и поговорках осмыслены и художественно воплощены различные стороны жизни курдов, раскрывается народное мировоззрение, морально этические и эстетические представления.

Своими работами А.Джнди внес огромный вклад в сокровищницу курдского фольклора. Он издал пятитомник Курдских народных сказок.²²

В публикациях Аджие Джнди представлены известные эпические и исторические песни-сказы, образцы любовной лирики, песни странствий и скитаний. На протяжении веков сохраняли они свои сюжетные очертания и были любимы народом.. Сюжетов и героических персонажей множество. Это - и варианты эпоса об осаде крепости Дымдым в XVIIв., и Сказания о курдских богатырях Рустаме Зале и Кёр-оглы, и многочисленные любовные поэмы, которые до сих пор хранятся в памяти народа и поются народными исполнителями-дандебежами.

К трудам Аджие Джнди обращались и будут обращаться в будущем несомненно специалисты-курдоведы в поисках фольклорного материала. Так, М.Б.Руденко не удовлетворялась лишь изучением письменных источников. Выявляя в своих работах тесную взаимосвязь и взаимовлияние курдской литературы и фольклора, она постоянно интересовалась богатым и многообразным народным творчеством курдов. В своих исследованиях она использовала фольклорные версии "Мам и Зин", "Ле́или и Меджлум" из сборников, изданных Аджие Джнди.

В 1978г., коллектив сотрудников группы курдоведения Ленинградского отделения института востоковедения, во главе с К.К.Курдоевым подготовил сборник "Народные варианты курдской поэмы "Мам и Зин", включавший 12

²² Шестой том Курдских народных сказок вышел посмертно, 2005г.

вариантов на различных говорах и диалектах курдского языка,²³ из которых два были взяты из сборников Аджие Джнди.

В опубликованной в 2002г. книге "Курдская народная лирика" (Транслитерация текстов, перевод, предисловие, примечания и приложение К.К.Курдоева и Ж.С.Мусаэлян) почти половину отобранных текстов составляют наиболее поэтичные образцы любовной лирики из сборников Аджие Джнди 1336 и 1957гг., ставших библиографической редкостью.

Два варианта из сборников Аджие Джнди приведены и в работе Ж.С.Мусаэлян "Замбильфрош: Курдская поэма и её фольклорные версии" (М., 1983).

Бесценная сокровищница курдского народного творчества была собрана Аджие Джнди, и работа ученого была оценена как научный подвиг. В 1964г. без защиты диссертации ему была присуждена ученая степень доктора филологических наук, в 1966г. - звание профессора и почетное звание Заслуженного деятеля науки Армении.

Ученого, отличали высокая интеллигентность, культура и беспрецедентная преданность делу всей жизни - курдскому народному творчеству. Высокие его помыслы нашли свое отражение в романе "И пришла весна", который поражает своей искренностью и чистотой звучания авторского слова. Мы слышим голос писателя, вобравшего в себя мудрость курдских сказов и былин, сумевшего объять необъятное - думы и чаяния своего народа.

Современники высоко оценили деятельность Аджие Джнди. Очень красочно выразил свое мнение академик Б.М.Кедров, который отметил, что ученому принадлежало бесспорное первенство в Советском Союзе. Он стал первым курдским студентом, первым кандидатом наук среди курдов, первым доктором наук, писателем, переводчиком, литееватуро-ведом и крупным фольклористом - настоящим М.В.Ломоносовым курдского народа. Деятельность Аджие Джнди приравняли труду целого научного института.

²³ Эта работа вышла в Стокгольме в 1996 г.

Жизнь Аджие Джнди, какой она отразилась на фотографиях и в памяти родных и близких, поражает своей чистотой и целеустремленностью. В памяти коллег Аджие Джнди остался бесконечно талантливым, исключительно трудолюбивым, собранным, дисциплинированным, светлым человеком.

Мы рады и гордимся тем, что были его современниками.

Доктор исторических наук

Е.И.Васильева

Кандидат филологических наук

Ж.С.Мусаэлян

Курдоведы С.Петербургского филиала Института

Востоковедения РАН

11.02.2008

ДЕЛЕГАТ 1-ОГО ВСЕСОЮЗНОГО СЪЕЗДА ПИСАТЕЛЕЙ

В архиве доктора филологических наук, профессора, Заслуженного деятеля науки Армении, писателя, автора более 110 научных, фольклорных, художественных, учебных книг Аджие Джнди хранится справка о том, что он с 1930-го года по 1968 год являлся председателем секции курдских писателей Армении, а в 1933 году являлся членом оргкомитета Союза писателей Армении.

Аджие Джндини 1-ом съезде писателей Армении был избран членом правления союза писателей Армении 1934-1968гг. и делегатом 1-го исторического съезда писателей СССР.

“Большой честью явилось для меня то, что меня – наряду с такими выдающимися армянскими писателями как Чаренц, Бакунц, Ширванзаде, Маари, Демирчян и другие, избрали делегатом 1-го съезда писателей СССР”, - вспоминал А. Джинди.

В 1934 году с чувством гордости 26-и летний Аджи ехал в Москву, зная, что на этом съезде в числе произведений

писателей больших и малых народов советских республик будут представлены и произведения советских курдских писателей.

На съезд отец повез сборники произведений молодых курдских писателей, а также учебники курдского языка и литературы. Он готовился выступать на съезде. Хранятся тезисы его выступления:

1. Роль Союза писателей Армении в деле развития курдской литературы;
2. Переводческая литература;
3. Институт истории материальной культуры Армении и организованные им армяно-курдские научные экспедиции в районы Армении - для собирания народного творчества.

Но, к сожалению, это выступление не состоялось, поскольку регламент съезда был очень ограниченным.

«Максим Горкий в своем докладе,- вспоминал впоследствии А.Джинди,- остановился также на некоторых черезвичайно интересовавших меня важных вопросах устного народного творчества... И я был горд, что я с любовью изучаю неисчерпаемую духовную сокровищницу своего народа и моя тема кандидатской диссертации о народном эпосе «Кар и Кулыке Слемане Сливи».²⁴

На 1-ом съезде писателей СССР председатель правления СП Армении Д.Симонян в своем выступлении отметил также, что в Советской Армении живет курдская община, которая имеет секцию курдских писателей при СП Армении, курдскую газету «Ряа таза», по радио идут 15 минутные передачи на курдском языке, открылся первый Закавказский курурдский педагогический техникум, издаются художественные книги, учебники.

²⁴ Диссертация для защиты была готова в конце 1936 года, но не давали ему защищить ее: в 1936 году ему отказали в принятии в ряды коммунистической партии и постепенно начались политические гонения, которые закончились арестом в 1938 году. Аджие Джинди защитил свою диссертацию 1940г.

На 1-ом съезде писателей СССР у Аджие Джндибыло приятное знакомство с французским писателем Жаном Ришаром Блоком - автором романа "Курдский вечер".

Мама моя рассказывала (она 26 февраля 2007г. умерла. Ей было 93 года), что на съезде после приветственного слова секретаря ЦККР(б) А. Жданова, все стоя оплодировали ему и только отец стоял молча...

После этого заседания с отцом «беседовали» и узнали, что у него нет кисти левой руки, попросили извинения. Еще в детстве в результате несчастного случая отец серьезно повредил руку, которую пришлось ампутировать...

В 1974-ом году А.Джнди в Москве участвовал в торжествах, посвященных 40-летию этого исторического съезда.

Было приглашение участвовать и в торжествах, посвященных 50-летию 1-го Всесоюзного съезда писателей. Но он, по болезни, не смог выехать.

**Фрида Джаяари
персональная пенсионерка,
10.02. 2008**

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՄԲ

Յաջիե Զնդի - 100 և զարմանալի կենդանի ներկայություն չերս ժպիտով, կիրք ու մարդանոտ կեցվածքով, գիտական լայնահուն վաստակով, օջախի շեն մեծին ու մեծերին հատուկ ժողովրդական իմաստությամբ ու ժողովրդական ճանաչումով:

Սովորաբար գիտական աշխարհում ճանաչումը գալիս է դանդաղ, քայլ առ քայլ, ողջ կյանքի ընթացքում, սակայն Յաջիե Զնդու պարագայում այդ ճանաչումը դեռևս երիտասարդ տարիքից է ուղեկցել իրեն և դա զարմանալիորեն ներդաշնակ, մեծերին վայել հանդարտությամբ, համեստությամբ փոխանցվել շրջապատին, մեր գիտական աշխարհին ու մարդկանց:

Քրդագիտության ռահվիրան՝ այսպես է բնութագրել նրան արևելագետ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Նիկոլայ Շովիաննիսյանը «Զագրոս» Յայաստանի քրդական ազգային խորհրդի պաշտոնաթերթի 2008թ. թիվ 2 (8) մարտ, համարում և դրանով ամեն ինչ ասված է: Երկար տասնամյակներ աշխատելով Յայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում կարևորել են հայ-քրդական բարեկամության նշանակությունը, որի ջատագովն էր ականավոր գիտնական, արևելագիտ-քրդագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Յայաստանի գիտության վաստակավոր գործիչ Յաջիե Զնդի Զառուարին:

Գիտնականի հարուստ հետաքրքրություններից ու վաստակից անբաժան է նաև գեղարվեստական գրականությունը: Ակադեմիկոս Արամ Ղանալանյանի խոսքի այս պատահիկը մեկ անգամ ևս պարտքս են համարում մեջ թերել այդ նույն թերթից, քանի որ շատ լավ են ճանաչում նրանց երկուսին էլ և վաստակով և նվիրումով՝ «Երբեք չփորձեց ուրիշի հաշվին ուղի հարթել իր համար: Ընդհակառակը, նա սեփական ուժերին ներածին չափ միշտ ձգտեց օգտակար լինել մարդկանց, նրանց հետ կիսեց ազնիվ տքնությամբ ձեռք թերած իր կենսափորձն ու իմացությունները»:

Դրանում ես համոզվեցի նրա վերաբերմունքով իմ գիտական և հասարակական, նաև լրագրողական դժվարին աշխատանքի հանդեպ:

Նրան տրված էր մարդկանց արժեկություն, գնահատելու, մտերմանալու արվեստը: Շատ պարտաճանաչ ներկա էր գտնվում մեր արևելագիտության իմստիտուտի գիտական նիստերին,

գիտական նստաշրջաններին, միջոցառումներին, միշտ գտնելով ջերմ ու բարի, ոգևորող, տրամադրություն բարձրացնող խոսք: Մեզ տասնամյակներ ու սերունդներ են բաժանում, նա իմ տարեկիցների համար ավագանի էր և ավելին, սակայն նա ընկեր էր և շատ կիրք ու նուրբ մտավորական:

80-ական թվականներին իմ արվեստաբանական և լրագրողական աշխատանքից դուրս չմնացին նաև մեր երկու ժողովուրդների մշակութային առնչությունները հայ կերպարվեստի բնագավառում: «Ռյա Թազա» թերթի 1984-1988 թթ. տարբեր համարներում գետեղված են իմ հեղինակությամբ «Շայ նկարիչները քրդական թեմայով» հոդվածները, նկարների պատկերների համապատասխան վերատպություններով, ընդգրկուն տվյալներով հայ նկարիչների և նրանց քրդական թեմայով աշխատանքների մասին: Դաշին Զննին իր պարտքն էր համարում ինձ շնորհավորել յուրաքանչյուր նման իրատարակումից հետո, կարևորելով իմ աշխատանքը, որն իրոք ինձնից մեծ ջանքեր ու պրատումներ էին պահանջում, քանի որ թեմատիկ մոտեցում էր և «Ռյա Թազա» թերթի էջերում այդ շարքը սկսելը և իրականացնելը իմ նախաձեռնությամբ և հեղինակությամբ է կայացել: Դա ոչ միայն ես եմ կարևորում, այլ առաջին հերթին թերթի այդ տարիների խմբագիրն ու խմբագրակազմը, որոնք ջերմորեն արձագանքեցին ընդառաջելով, ինձ ոգևորելով և իրականացնելով իմ հոդվածների տպագրությունը առանց որի իմ նախաձեռնությունը կմնար լոկ ծրագիր: Եվ ահա մեր ընտանիքի բարեկամութի, հարևանութի, վաստակաշատ նկարչութի և վաստակավոր մանկավարժ Անժել Սարգսյանը Շայաստանի վաստակավոր նկարիչ էդվարդ Սարգսյանի քույրը, լսելով իմ զրոյացները ռադիոյով իմ հոդվածների մասին, ոգևորված ինձ է բերում իր բուկլետներից էջեր, ուր պատկերված են ազգային տարագով գեղեցիկ քրուիիներ, հետո ավելացնում է, որ ինքը գծանկար գրաֆիկական աշխատանքի նմուշ էլ ունի՝ Դաշին Զննուն ինքն է նկարել, երբ վերջինս դեռ երիտասարդ տարիքում էր: Դետո ավելացրեց. - Շատ լավ մարդ է, իսկական ժողովրդական գիտնական է, շատ հետաքրքիր զրուցում էր, պատճում էր, ես առաջարկեցի, որ նկարեմ, ահա, կարևոր են համարում նշել, որ Անժել Սարգսյանը մասնագիտություն ստացել էր Մոսկվայի հեղինակավոր բուհում, իսկ երևանում նա Փանոս Թերլեմեզյանի գեղարվեստական ուսումնարանում երկար

տարիներ գծանկար է դասավանդել և մեր ավագ ու միջին սերնդի նկարիչների մեծամասնությունը նկարչությունը սաներն են: Իմ նվերը նրա ծննդյան 80-ամյակին՝ հողվածս է Հաջիե Զնոփի նկարով Անժել Սարգսյանի և նրա քրդական թեմայով աշխատանքների մասին՝ հրատարակվեց «Ոյա թագա» թերթում, 1988թ. մարտին:²⁵

Այդ համարի լուսադաշտումը նրանց կենդանության օրոք երկուստեք հարգանքի տուրք էր և նկարչությունը բարեկամություս, որը սիրով էր աշխատել և գիտնական մեր գործընկերոջը, իսկ այսօր նաև հիշատակի խոսք նրանց և հայ-քրդական մշակութային կապերի ևս մի կենդանի վկայություն:

*Կարինե Սամվելյան,
արևելագետ-հրապարակախոս
05.04.2008*

²⁵ Stev' Կարինե Սամվելյան, Էմքե շակլք'եշե, P'նա Տ'զզ, 8-ը մարտե, 1988, P'ye 4.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԼՀԳ - «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան
ՊԲՀ - Պատմա-քանասիրական հանդես, Երևան

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ՀՍԴ - Հայկական սովետական հանրագիտարան, Երևան

Տեղեկագիր - «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, Երևան
ԲСЭ - Большая советская энциклопедия, Москва

ԼՈՒԱՆԿԱՐՆԵՐ



Ր.Զնդին Ավ.Իսահակյանի հետ 1954թ.



Ր.Զնդին Ջովի.Շիրազի և մանկատան
ընկեր Գ.Ղարիբյանի հետ 1971թ.



Ր.Զնդին Կ.Մելիք-Օհանջանյանի
և Ա.Ղանալանյանի հետ 1959թ.



Ր.Զնդին Ա.Ավդալի հետ 1956թ.



Ր.ԶԱՆԴԻՆ Ա.ՔԱՍՏՐԱՋՅԱՆԻ և Ծ.ՄԻԼԵՅԱՆԻ հետ 1965թ.



Ր.ԶԱՆԴԻՆ և Ղ.ՔՈՎՐԴՈՒԿԻ հետ 1961թ.



Րաջիե Զնիին Սեղա Ռուլենկոյի հետ, 1961թ.




Նստած են ձախից՝ Յ.Զնիին, Ա.Շամիլովը, Ռաշիդ Քուրոդը,
կանգնած են՝ Մ.Խամոյանը, Զ.Զալիլը, Շ.Միոյանը, Խ.Չատուկը,
1966:



Դայաստանի Գրողների III համագումարում 1954թ. Աջից
Ավ. Իսահակյան, Յ. Զնդի, Յր. Թոշար



Յ. Զնդի Յ. Մկրտչյանի և Ս. Մանուկյանի հետ հետ 1976թ.



Ր. Զնդին և. Դաշտենցի հետ 1970թ.




Ր. Զնդին բանահյուսություն գրառելիս



Յաջին Զնդին Կնյազ Միրզոյանի հետ 1971թ.



Յ.Զնդին Ֆերիկե Ուսովի հետ 1953թ.



Ր.Զնդին կնոջ՝ Զեյնավա Իվոյի հետ, 1981:



.Զնդիի ընտանիքը.Առաջին շարքում ձախից աջ՝ դուստրը՝ Ֆրիդան, Ր.Զնդին, կինը՝ Զեյնավա Իվոն, դուստրը՝ Ֆրիջան: Երկրորդ շարքում՝ դուստրերը՝ Նազեն, Զինեն, Նուրեն՝ 1981:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Յաջիե Զնդի (Աերածական՝ Ն. Յովհաննիսյանի).....	5
2. Յաջիե Զնդիի կյանքի և գործունեության իմանական տարերվերը.....	8
3. Աշխատությունների ժամանակագրական ցանկ.....	14
4. Յ. Զնդիի կյանքին ու գործունեությանը վերաբերող գրականության ժամանակագրական ցանկ.....	28
5. Ընձայագրեր.....	39
6. Յորելյանական տարերվեր ՈՒՂԵՐՉՆԵՐ.....	46
ՀՈՂՎԱԾՆԵՐ	
Ա. Ղանալանյան, Խոսք Յաջիե Զնդիի մասին.....	66
Դ. Թաճրազյան, Կաստակաշատ գործիչը.....	68
Ֆ. Ուսով, Յաջիե Զնդի.....	70
Ա. Զաքարյան, Գիտության նվիրյալը, ազնիվ քաղաքացին.....	72
Ս. Յախումյան, Ամենաուսուցիչ... Ամենամարդ.....	75
Գ. Յովնան, Յաջի Զնն.....	77
Յ. Մեգրելինե, Ս. Զաքարյան, Ազանավոր քրդագետը	78
Շ. Մրու, ՎԵԼԻЧИЕ ՍԿԵНОГО Ի ՊՐԱՋԴԱՆԻԱ.....	81
Ս. Յարությունյան, Բուրդ բանագիտության մեջ երախտավորը.....	85
Վ. Աշո, ՄԵծավաստակ գիտնականը.....	94
Ե. Ի. Վասիլյևա, Ժ. Ս. Մուսազլյան ՊԱՄЯТИ ՎԵЛИКОГО ԿҮРДСКОГО ՍԿԵНОГО ԱԴՋԻԵ ՋՀՆДԻ.....	103
Փ. Ճայարս, ДЕЛЕГАТ 1-ОГО ՎԵՍԵՕՅՅՈՒ ԸԵՅՅԱ ՊԻՍԱՏԵԼԵЙ.....	108
Կ. Սամվելյան, Ժողովրդական իմաստությամբ.....	111
7. Յապավումների ցանկ.....	114
8. Լուսանկարներ.....	115

ՀԱԶԻԵ ԶՆԴԻ

ՓԱՍՏԱԿԱՆ ՆՑՈՒԹԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ
ԿՑԱՆՔԻ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խմբագիր՝ Արմենուհի Ստեփանյան
Հրատարակչական խմբագիր՝ Ալիսանե Մամե

Հանձնված է տպագրության 23.05.2008թ.
Տպագրությունը՝ օֆսեթ: 7.2 տպ. մամուլ:

Տպագրված է «Օրենք և իրականություն» ՍՊԸ տպարանում: